№. 61—ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 61

1897 ՅՈՒՆԻՍԻ 1 (13) ԿԻՐԱԿԻ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը:
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.:
Առանձին համարը 7 կոպէկ:
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»:
Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ".
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԱՐՁԱԳԱՆՔ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
(ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ)
Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդամիրովի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»:
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ԹԷ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԹԷ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ, 6 ԱՄՍՈՎ 6 ՌՈՒԲԼԻ, 1 ԱՄՍՈՎ 1 ՌՈՒԲԼԻ
Օտարքաղաքացիք պէտք է գրեն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction du journal arménien „Ardzagang"
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով:

ՄԱՐԻԱՄ ԱՍԼԱՆԵԱՆ և ԲԱՐՍԵՂ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ԻՒՋԲԱՇԵԱՆՑ ՆԵՐԸ և ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՍԼԱՆԵԱՆ ԿՈՒԿՈՒՋԱՆԵԱՆՑԸ ցաւօք սրտի յայտնելով իրանց բարեկամներին և ծանօթներին առաջինը իւր ամուսնու, երկրորդը եղբօր և երրորդը իւր փեսայ՝ տոհմական պատուաւոր քաղաքացի
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ԻՒՋԲԱՇԵԱՆՑԻ
մահը, խնդրում են չնորհ բերել յուղարկաւորութեան, յունիսի 3-ին, երեքշաբթի, առաւօտեան 10 ժամին, իւր սեփական տնից, Փոլէլևսկի փ. № 14 դէպի Վանքի մայր եկեղեցին:
Ամբիծը կկատարուի յունիսի 2-ին, երեկոյեան 7 ժամին: (1—1)

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ Թիֆլիզի քաղաքային իրաւասուների լրացուցիչ ընտրութիւնը, որ նշանակուած էր յունիսի 1-ին, առաւօտեան ժամը 8-ին, Թիֆլիզի պ. նահանգապետի կարգադրութեամբ սկսուելու է ցերեկուայ ժամը 1-ին: (1—1)

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ
Երեքշաբթի, յունիսի 3-ին 1897 թ.
Հայ դերասանական խմբի անդամները
Մասնակցութեամբ տ. ԶԱՐՈՒՀՈՒ, օր. ԱՇԽԷՆԻ և այլոց կըներկայացնեն
ԲԱՂԴԱՍԱՐ ԱՂԲԱՐ
Կատակերգ. 3 արար. Հ. Պարոնեանի գրուածքից բեմի յարմարեցրին Ա. Արեշատեան և Ա. Վրոյր:
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱԺՆՈՒՄ
ՄՈՍԿՎԱՅԻ ԿԱՅՍԵՐ. ՕՊԵՐԱՅԻ ԱՐՏԻՍՏ
Պ. ԲԵԳԼԱՐ ԱՄԻՐՋԱՆԸ
կ'երգէ
«Ա՛յ վարդ» երաժշտ. Սպէնդիէրեանի. խօսք Ա. Ծատուրեանի և «Լուեց ամպերը» երաժ. Բ. Ամիրջանի. խօսք Քամառ-Քաթիպայի:
ՏԵՂԵՐԻ ԳԻՆԸ ՍՈՎՈՐԱԿԱՆՆ Է
Ճիշտ ժամի 9-ին վարագոյրը կբարձրանայ (2—2)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին դէպքերը Թիւրքիայում:
Քաղաքային լրացուցիչ ընտրութիւնները:
Գործարանական տեսչութիւն Բագւում:
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Բարձրագոյն հրովարտակ: Յորդ անձրև Թիֆլիզում: Աւազակների յանդգնութիւնը: Արասթումանի աւազակները: Կովկասի գինեգործութիւնը: Գաւառական դեղատներ: Նամակ Կաղզուանից: Նամակ Իգդիրից: Նամակ խմբագրութեան: Ջութակահար պ. Նալբանդեան: Օդեսայից: Օր. Պապայեանի ուղեւորութիւնը: «Դժոխք» գրքոյկը: Թիֆլիզի փողոցային սալայատակը: Նոր հրատարակութեան հաշուապահ.: Առաջիկայ հոգաբարձ. ընտրութիւնները Երեւանում:
ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ
ՓԵԼԻԵՏՕՆ.—Խնթ: Մէկը մի փող:
ՋԱՆԱՁԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Frankf. Zeitung»-ի Կ. Պօլսոյ թղթակիցը հաղորդում է, թէ դեսպանները ստացան Դրան պատասխանը, որով վերջինս մերժում էր գինադադարի ընդունելը և պահանջում էր պատերազմը շարունակել. ուստի դեսպանները անմիջապէս ժողով գումարեցին, որին մասնակցում էր նաև Թուրքաց արտաքին գործոց նախարար Թէվֆիկ փաշան: Սակայն այդ խորհրդի ժամանակ ոչ մի համաձայնութիւն չկայացաւ, որովհետև Ռուսիան պահանջում էր, որ գինադադարը սահմանուի առանց ժամանակ որոշելու, այսինքն մինչև խաղաղութեան դաշն կապելը, իսկ Թէվֆիկ վճռապէս մերժում էր այդ և դեսպանների մեծամասնութիւնը ևս նրան պաշտպանում էր ասելով թէ բանակցութեանց երկարելու դէպքում Թիւրքիան ստիպուած անհարկի ծախսերի է ենթարկվում՝ Թեսալիայում զօրքեր պահելով: Թէֆիկ փաշան առաջարկում էր, որ գինադադարն այնպէս սահմանուի, որ կարելի լինի նրան վերանորոգել ամեն մի 48 ժամից յետոյ. սակայն այդ առաջարկութիւնը մերժուեց և վերջ ի վերջոյ ժողովում ոչ մի համաձայնութիւն չկայացաւ: Միայն հետեւեալ օրը սուլթանն ստորագրեց երկու շաբթուան գինադադար սահմանելու իրադէն:

Երևում է որ Գերմանիան ամենից աւելի է աշխատում բանակցութիւնները ձգձգելու և Թիւրքիային ներշնչում է դուրս չգալ Թեսալիայից: «Hamburger Nachtrichten» Բիսմարկի օրգանը պնդում է, որ եթէ Թեսալիան վերադարձնուի Յունաստանին, այն ժամանակ պէտք է բացասել, որ մօտիկ ապագայում Թիւրքիայի վրայ կըյարձակուին Բուլղարեան և Սերբիան, որովհետև դրանք համոզուած կլինեն, թէ նոյն իսկ յաղթուելու դէպքում իրանք ոչինչ չեն կորցնի:

ՌՈՒՍ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴՐՈՒՄ

Վերջին ժամանակներս արտասահմանեան մամուլի մէջ շատ յաճախ են կրկնվում ռուս-ֆրանսիական յարաբերութեանց վատանալու մասին արեւելեան խնդրի վերաբերմամբ: Այդ առթիւ ռուսական օրգան համարուող Փարիզի „Nord" լրագիրը գրում է հետեւեալը. «Այն ժամանակ, երբ ծագել են արեւելեան բարդութիւնները, մանաւանդ սկսած յոյն թրքական ընդհարման օրից, ֆրանս ռուսական դաշնակցութեան դերի մասին ամենատարբեր լուրեր են տարածվում: Մենք շատ անգամ ենք յայտարարել՝ թէ այդ լուրերն անհիմն են, բայց որովհետև մեղադրութիւնները յամառութեամբ կրկնվում են, ուստի մենք մտադիր ենք անաչառ մարդկանց ներկայացնել բոլոր գործը իւր իսկական կերպարանքով:

Ֆրանս-ռուսական համաձայնութեան վերաբերմամբ գլխաւոր մեղադրութիւնն այն է, որ նա իբր թէ պաշտպանում է Թիւրքիայի կողմը, ի վնաս Յունաստանի: Ֆրանսիական և ռուսական քաղաքականութիւնը մեղադրում են նոյնպէս, ասելով թէ նրանք ենթարկուած են գերմանական ազդեցութեան: Խօսում են ինչ որ ռուս-գերմանական համաձայնութեան մասին, որ նուաճեցնում է Ֆրանսիայի քաղաքական ազդեցութիւնը: Այդպիսի ենթադրութիւնների վրայ պնդելու համար, ասում է „Nord"-ը, պէտք է բացարձակապէս ոչ մի հասկացողութիւն չունենալ դիպլոմատիայի և նրա գործունէութեան մասին: Աւելի զարմանալի է, որ այդ տեղեկութիւնները, իբրև հաստատ լուրեր, պատահում են ոչ միայն ֆրանսիական, այլև գերմանական լրագրներում: Այդ բոլորը „Nord"-ը վերագրում է Բիսմարկի խարդախութեան, որ միշտ ցանկանում է «ստորացնել Ֆրանսիան»: Բիսմարկը օգուտ քաղեց յոյն-թրքական բարդութիւններից, որպէսզի աշխատէ ապացուցանել, թէ Ռուսիան ամենևին համերաշխ չէ Ֆրանսիայի յանասիրական քաղաքականութեան, այլ ձեռք ձեռքի տուած է գնում Գերմանիայի հետ, իբրև թէ բարեմոլ: Այդպէս է խօսում Բիսմարկի օրգան „Hamburg. Nachrich.". իսկ „Neue Fr. Pr." աւելի առաջ է գնում ասելով թէ Ռուսիան ստիպուած է միանալ Գերմանիայի թրքամոլական քաղաքականութեան, որովհետև Ֆրանսիան համերաշխ է այդ խնդրում Անգլիայի հետ և նրա համակրութիւնը յոյների կողմն է:

«Nord»-ն այս տողերը գրելով այնուամենայնիւ չէ կարողանում պարզել թէ ինչումն է կայանում ֆրանս-ռուսական համաձայնութիւնը արեւելեան խնդրի վերաբերմամբ և չէ հերքում թէ Գերմանիայի թրքամոլութիւնը իրան հետևողներ է գըտնում Ռուսիայում:

ԿՐԻՏԷԻ ՎԻՃԱԿԸ

Կրետէում տիրում է նոյն անորոշ վիճակը, նոյն գրգռուած դրութիւնը: «Manchester Gard.» հաղորդում է իբր թէ Կրետէի 24 գաւառներից իւրաքանչիւրը ընտրել է 4 պատգամաւոր այն նպատակով, որ դրանք իրանց միջից ընտրեն 24 հոգուց բաղկացած ժամանակաւոր կառավարիչներ կղզու համար: Ժամանակաւոր կառավարութեան այդ անդամները պիտի ժողովուեն Ակրոտերի ծովակալների հետ բանակցելու համար:

Որովհետև վերջերս թուրքերը շարունակ յարձակվում են ապստամբների վրայ և բաշիբուզուկները կոտորածներ և սպանութիւններ են կատարում քրիստոնէական գիւղերում և Հէրակլիոնի շրջակայքում, ուստի տեղական ներքական հիւպատոսները քննիչ յանձնաժողով են նշանակել (Էլի քննիչ յանձնաժողով), որի պահանջմամբ տեղական զօրամասը բանտարկեց վեց մահմեդականներ, որոնք անկարգութեանց գլխաւորներն են համարվում: Բայց երբ այդ լուրը տարածուեց քաղաքում իսկոյն գոյացաւ մի ամբոխ տան առաջ խմբուեց մահմեդականների աղաղակեց ամբոխ, որ պահանջում էր արձակել բանտարկուածներին:

Լուրեր կան, որ գնդապետ Չերմըզայը հրաման է ստացել ծովակալներից գինաթափ անել Կանդիայի մահմետականներին:

«Times»-ը ի նկատի ունենալով Կրետէի վրայ անիշխանութեան տարածումը, կրկին անգամ առաջարկում է շտապել կրետացիներին հաղորդել ապագայ ինքնավարութեան հիմնական սկզբունքները: Բացի դրանից քրիստոնեաներին հանգստացնելու և արդէն չափազանց երես առած և լրբացած թուրքերին մի քիչ սանձահարելու համար լրագիրն առաջարկում է իսկոյն կղզուց դուրս հանել թուրք զօրքերի գէթ մի մասը: Այդ միջոցով կարելի կլինի քրիստոնեաներին հակեցնել ինքնավարութեան կողմը, որովհետև այդպիսով նրանք կըտեսնեն և կըհաւատան թէ կղզու դրութիւնը առաջուանը չէ մնում:

Կանդիայում տեղի ունեցած անկարգութեանց պատճառով Կանէայում եղած իտալական զօրքերին հրամայուած է Կանդիա գնալ:

«Standard»-ին հաղորդում են թէ Ակրոտիրիի և Ալեկիանի ապստամբների մէջ անհամաձայնութիւններ են ծագել ազգային ժողով հրաւիրելու վերաբերմամբ:

«ԱՍՊԵՏԱԿԱՆ ԶԳԱՑՈՒՄՆ»

Սուլթանը իւր «ասպետական զգացումն» (ինչպէս կատակով ասում է «Times»-ի Կ. Պօլսոյ թղթակիցը) նրանով յայտնեց, որ գլխաւոր հրաման ուղարկեց՝ արգելել որևէ համակրական յօդուած յունաց թագաւորական գերդաստանի և յունական ֆօնդի բարուաքման մասին: Կալաթայի ստրիկանութիւնը պատուէր է ստացել բանտարկելու բոլոր այն անձերը, որոնք յունական արժեթղթերի վրայ առևտուր կ'անեն:

Ամենքից հաղորդում են «Daily Chronicle» ին, որ թուրքերն սկսել են հաւաքել Թեսալիայի հունձերը, որոնց արժէքը 40 միլեոն դր. են հաշւում: (Եւ քանի՜ քանի Թեսալիացիներ փչացան այս երեք տարում թիւրքահայոց ձեռքում):

ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

„Times"-ի թղթակիցը հաղորդում է, թէ դեսպանների խորհուրդը բանակցութեանց առթիւ շարունակուեց երեք ժամ: Այդ նիստին Թէֆիկ փաշան դեսպաններին առաջարկեց քննել Դրան պայմանները: Երկար վիճաբանութիւններից յետոյ վճռուեց յանձնել ռուսաց դեսպան Նելիդովին, որ հետեւեալ նիստին պատրաստէ մի զեկուցումն սահմանագլուխն ուղղելու վերաբերմամբ, ֆրանսիական դեսպան Կամբոնին յանձնուեց քննել յոյն հպատակների արտօնութեանց սահմանափակելու խնդիրը, իսկ պ. Կալլրին պիտի որոշէ պատերազմական տուգանքի քանակութիւնը:

„Times"-ի Վեննայի թղթակիցը հաղորդում է, թէ պետութիւնները մտադիր չեն Յունաստանին ենթարկել աւելի տուգանքի քան նա կարող է վճարել: Այդ գումարը համարվում է 3 միլիոն լիրա: Մինչև այժմ դեռ շատերին այն ծրագրի կողմն են, որ տուգանքի փոխարէն Թիւրքիային տրուի Յունաստանի նաւատորմիղի մի մասը և յունաց բարեկամները այդ աւելի օգտակար են համարում, առարկելով թէ մինչև տասը տարի Յունաստանը նոր պատերազմ մղելու անկարող է, իսկ տասն տարուան ընթացքում այդ նաւատորմիղը այնքան կըհնանայ, որ այժմեան արժէքն այլևս չի ունենալ:

«ԱՐՈՂՆ ԱԶԱՏՈՒԵԼ Է, ԱՍՈՂԸ ՊԱՏԺՈՒԵԼ»

Եգիպտական կառավարութիւնը Գահիրէի գերմանական դիւանագիտական գործակատարի ճնշման վրայ որոշեց պատժել արաբական «Միշիր» թերթի խմբագիր - հրատարակչին—գերմանական կայսրին վիրաւորելու համար: Այդ թերթը միայն եւրոպական լրագիրների արձագանքն էր տուել:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մայիսի 18-ին կայացած քաղաքային իրաւասուների ընտրութեանց հետեւանքից երևաց որ ընտրուած են միայն 57 իրաւասուներ, մինչդեռ նրանց թիւը պիտի լինի 80 և, բացի դրանցից, 16 կանդիդատներ: Այսօր, յունիսի 1-ին, Թիֆլիզի ժողովարանի ամարային բնակարանում պիտի կայանան լրացուցիչ ընտրութիւնները:

Ձնայելով «Կավկազ» լրագրի խարդաւանքներին և անատամ չարութեանը, ընտրութիւններն անցան ամենայն կանոնաւորութեամբ և օրինականութեամբ, և նրանից դժգոհ կարող են մնալ միայն այն մարդիկ, որոնք կամ հասկացողութիւն չունին օրէնքի մասին, կամ շարունակ դըժգոհ մնալու տրամադրութիւնը հիւանդութեան աստիճանի են հասցրել:

Հետևելով ուշադրութեամբ մեր երկրի մամուլի օրգանների և ժողովրդական զանազան խաւերի մէջ արտայայտուած մտքերին, գալիս ենք այն եզրակացութեան, որ կատարուած ընտրութիւնները ընդհանուր գոհութիւն են պատճառել:

Դժգոհ են մնացել միայն «Կավկազ» լրագրի խմբագիրը իւր արժանաւոր «աշխատակիցներով» և «Մշակ» լրագիրը, որ ներկայ դէպքում չկարողացաւ իւր դիմակը պահել: Առաջինի դժգոհութեան պատճառները վաղուց յայտնի են և հասկացուած. նա ցանկանում էր մեր քաղաքային ինքնավարութիւնը նոյնը դարձնել, ինչ որ դարձրաւ մինչև իւր Կովկաս գալու օրը յարգուած «Կավկազ» լրագիրը:

Երկրորդը—«Մշակը» դժգոհ է նոյն իսկ իւր անակնկալ յաջողութիւնից, իւր խմբագրի ընտրութիւնից, որովհետև ընտրուած են և այդ խմբագրին ընտրական բուէ տուող ուրիշ հայերը: Առաջին անգամ Թիֆլիզում և առ հասարակ իւր կեանքում իրաւասու ընտրուած Աղէքսանդր Քալանթարի աղուութիւնն այնքան եղաւ, որ նա նոյն իսկ ընտրութեան հետեւեալ օրն իւր լրագրում ցաւ յայտնեց իրան ընտրական բուէ տուող հայերի ընտրուելու աւթիւ և մինչև անգամ սպառնալիք կարդաց, թէ հետևեալ ընտրութիւններին այդ հայերը դուրս կըմնան: Այս, ի հարկէ, որքան ծիծաղելի է, նոյնքան բնորոշիչ է «Մշակի» խմբագրութեան բարքերի համար և գիտութիւն այն անձանց, որոնք որևէ կոմպրոմիս անելուց այդ մարդկանց հետ պիտի երբէք չմոռանան ռուսական առածը թէ «նստեցրու նըրան» սեղանի կողքին, նա ոտներն էլ կըդնի սեղանի վրայ»: Այդպիսով մի սրտաշարժ համերաշխութիւն երևաց միայն «Կավկազի» և «Մշակի» մէջ, ի դէմս նրանց խմբագրներ Վելիչկոյի և Քալանթարի:

Երրորդ տեսակ դժգոհները կատարուած ընտրութիւններից նրանք են, որոնք դժգոհ են մնում սրա կամ նրա «խաթրի համար»: Դրան ց թիւն էլ շատ սահմանափակ է և երևում է որ դրանց գործած «մանեօվրները» ոչ մի ազդեցութիւն չեն գործում ընտրողների ինքնուրոյնութեան վրայ:

Մայիսի 18-ին ընտրութեանց օրը մենք վստահութիւն յայտնեցինք ընտրողների ինքնուրոյնութեան վըրայ, յոյս յայտնելով որ նրանք գործիք չեն դառնալ այս կամ այն ագիտատորական խմբերի և մեր յոյսն արդարացաւ և մեր ձայնը լսելի եղաւ: Այսօր մենք մեր ասածի վրայ նոր աւելացնելիք չունենք, այլ կըրկին ցանկանում ենք որ ընտրողները ղեկավարուեն խղճով, և ինքնուրոյնութեամբ նոյնպէս, ինչպէս և մայիսի 18-ի ընտրութիւններին:

ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԲԱԳՎՈՒՄ

Այս տարուայ յունիս ամսուանից Բագւայ շրջանի գործարաններում թէ նաւթահանքերում պաշտօնապէս մտցնվում է գործարանական տեսչութիւն, կամ վարչութիւն (фабрич. инспекція), որ վաղուց ի վեր գոյութիւն ունի Ռուսաստանի գործարաններում: Այսպիսով նոր բարեփոխութիւններ է մտցնվում բանուորական կեանքի մէջ, որով մեծ զարկ պիտի տայ բանուորական կեանքի տնտեսական զարգացման: Իսկ թէ ինչպիսի խղճալի պայմաններում է ապրում ներկայումս բանուոր դասակարգը, և թէ ինչ աչքով է նայում բանուորի վրայ տեղական ինտելիգենցիան, որի ձեռքով կատարվում է ամեն տեսակ զեղծումներ, առաջ բերենք մի քանի փաստեր այդ ինտելիգենտ կոչուած պարոնների արարմունքներից, ոպէս նմուշներ, ապա առաջ կըբերենք մի քանի կտորներ նոր հրատարակուած կանոնադրութիւնից, որով սանձահարվում են ներկայումս գոյութիւն ունեցող մի քանի տեսակ հարստահարութիւններ.

Ահա ձեզ օրինակներ:

Մի հոր փորող վարպետ (буровой мастеръ), որի ձեռամբ էր վարձվում նոր գտնուող հորերի բանուորները, համարեա թէ շաբաթը մի քանիսներին արձակում էր ու նորերը վարձում: Ձարունակ արձակուող բանուորները գալիս էին գանգատվում կառավարչին, որ վարպետը իրանցից հինգական ռուբլիներ կաշառք է վերցրել ընդունել գործի մէջ, իսկ դեռ մի շաբաթ չկայ արձակում է առանց մի պատճառի, աղաչում պաղատում են, որ կրկին յետ ընդունուին, կամ եթէ չեն ընդունում, գոնէ տուած փողերը իրանց վերադարձուին: Կառավարիչը երբէք չէր բարեհաճում հաւատալ, որ իրան սիրելի վարպետը կարող է այդպիսի խաղեր խաղալ բանուորների հետ, որովհետև իրան հետ շարունակ մարդասիրական սկզբունքի եայն այս բաների վրայ էր խօսում: Մի կառավարիչ իւր մի արհեստաւորի դուրս է անում գործից, որովհետև վերջինս պատահելով երկաթուղու կայարանում

գլուխ չէր տանել իրան։ Մի ուրիշը դուրս էր արել իր գործակատարին, որովհետև վերջինս յանդգնել էր իր կառավարչի ներկայութեամբ լրագիր կարդալ...

Այսպիսով հարիւրաւոր օրինակներ կարելի է բերել, որին կարող են վկայել այն մարդիկ, որոնք գէթ մի քանի ամիս բաղդ են ունեցել ապրել Բալախանում։

Իսկ թէ ինչ յանցանքների համար են բանուորներին տուգանքի ենթարկում, կարծում ենք, դորա մասին էլ աւելորդ չի լինիլ մի քանի օրինակներ բերել։ Բանուորներին տուգանքի ենթարկում են շատ չնչին պատճառներով, օրինակ, ժիլոնկայով նաւթ քաշելիս անզգուշութիւնից յանկարծ ժիլոնկան կպչում է չկիվին (торт. шкивъ) կամ թէ ժիլոնկան դատարկելիս մի երկու բոպէ ուշ է դատարկել և այդ նկատել է կառավարիչը, անպատճառ երեք ռուբլի տուգանք կայ։ Շատ անգամ պատահում են և այնպիսի դէպքեր, որ նաւթահանքի գործակատարները (ի հարկէ ոչ էս գործակատարները,որոնք այստեղ մեծամասնութիւն են կազմում) հրամայում են բանուորներին իրանց համար տնային ծառայութիւններ էլ անեն, եթէ պատահում է որ մի քիչ դժուարութեամբ են կատարում այդպիսի ծառայութիւններ, դարձեալ տուգանքը անխուսափելի է։ Երևակայեցէք բանուորները ամբողջ 12 ժամ տաժանելի աշխատանքից յետոյ, եթէ չէ ուզում կիսուի իր այդ դառն քրտինքով վաստակած մի քանի ռուբլիները, պիտի անտրտունջ տանի ամենատեսակ ծանրութիւններ, որքան էլ անտանելի լինին։

Մի նորաւարտ ինժիների համար այնպիսի բաներ են պատմում, որ մարդ մնում է ապշած, առասպելներ է թւում մարդու, բայց դժբաղդաբար ինչ որ անձամբ ստուգեցի, տեսայ որ լսածներիցս դեռ էլ աւելին է կատարվում։ Օրինակ, այսպիսի մի կարգադրութիւն է արել դեռ առաջին գործի մտած օրից, հրամայել է գործակատարներին և թէ վարպետներին, որ առանց իր գիտութեան բանուոր չվարձեն, ինքը անձամբ վարձում է բանուորներ, առանց ռոճիկները խօսելու, բանուորներն էլ կարծում են, որ իրանց սովորական ռոճիկները պիտի տան, որ լինում է սովորականը 15—17 ռուբլի։ Եւ այդպէս ամբողջ ամիսը բանելուց յետոյ, երբ գալիս են ռոճիկները ստանալու, յանկարծ հաշվում է տասն ռուբլիով, որ Բալախանում չեղած բան է մինչ օրս, և յայտնում է իր տիրոջ, որ բաւականին ծախսը իջեցրել է։ Իսկ երբ որ բանուորները չեն համաձայնվում մնալ 10 ռուբլիով, իրանց հասանելիք փողն են ուզում որ հեռանան, մի քանի ամիս էլ քաշքշում է դրա համար, այսօր վաղը ձգելով։ Բացի սրանից մնացած հին ծառայողների ռոճիկներն էլ կրճատում է 5% և այդպիսով իր կարծիքով ահագին օգուտներ է տալիս իր տիրոջը. . .

Իսկ թէ ուր են գնում այդ տուգանքներից հաւաքուած փողերը, դրա մասին շատ հակասական լուրեր են պտըտում։ Ասողներ էլ կան որպէս թէ մի մասը կառավարիչների գրպաններն է մտնում. մենք միայն մի ֆիրմայ գիտենք, որի մօտ կայ մի 1000 ռուբլի գումար, որ չգիտենք ինչ-ինչ պատճառներով մնում է անձեռնմխելի։

Այս յունիսի 1-ից հաստատուելով գործարանական վարչութիւն, վերը առաջ բերած չարիքների առաջն առնելու համար հետևեալ կանոններն են մշակուած։

Բանուորները վարձվում են որոշ պայմաններով, համաձայն վարձողի և վարձւողի որոշվում է յայտնի ժամանակ, պայմանաթուղթը ոչնչացնվում է միայն այն դէպքում, երբ որ բանւորը բացակայում է գործից չարունակ երեք օր առանց յարգելի պատճառների, կամ թէ վեց օրից մինչև մի ամիս պարբերաբար ուշանում է դարձեալ ոչ այնքան յարգելի պատճառներով։ Ռոճիկները պիտի բաժանուին իւրաքանչիւր ամսուայ վերջը առանց ուշացնելու։ Բանւորը չէ կարող արձակուել գործից առանց յարգելի պատճառների, հակառակ դէպքում արձակողը պատասխանատվութեան է ենթարկվում վարչութեան կողմից։ Բանուորների հետ պատահած ամեն տեսակ անախորժութիւնները պիտի արձանագրուին ու ամեն ամսուայ վերջը յանձնուին վարչութեան։ Տուգանքների համար էլ իւրաքանչիւր գործարանական գրասենեակի կամ հաշւետան արվում է մի ժապաւինեալ մատեան, որի մէջ գրըվում է տուգանքի քանակութիւնը, նրա պատճառները և այլն։ Ի վերջոյ տուգանքներից գոյացած փողերը պիտի գործադրուին այն բանուորների վրայ, որոնք ենթարկուել են որևէ դժբախտութեան, կամ թէ զրկուել են աշխատելու ընդունակութիւնից։

Այսպիսով, վերջապէս ուշադրութեան է առնվում բանուորների աննախանձելի դրութիւնը, և լեզու է գնվում նրանց բերաններում, որով կարող են որպէս մարդ իրանց սրտունջները յայտնել ում հարկն է։

Թէ ինչպէս կըգործադրուի նոր օրէնքը և թէ ինչպէս ընդունելութիւն կըգտնէ Բալախանում, որտեղ կենդրոնացած է բանւորների մեծամասնութիւնը, կաշխատենք պարբերաբար տեղեկութիւններ տալ «Արձագանք» ին։

Ի. Միրզաբէգեան։

1897 թ. մայիսի 28.
Բալախանի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

ԱՍՏՈՒԾՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ
ՄԵՆՔ ՆԻԿՈԼԱՅ ԵՐԿՐՈՐԴ
ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՅ

Ցայտնում ենք Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին. սոյն մայիսի 29-ին Մեր Ամենասիրելի Ամուսին Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնան ազատուեց յղութիւնից, ծնելով Մեզ դուստր, որ անուանուեցաւ Տատեանա։

Մեր Կայսերական Տան այսպիսի աճումն ընդունելով նոր նշան Աստուածային բարեաց, որ հեղում է Մեր և Մեր Կայսրութեան վրայ, աւետում ենք այս ուրախալի եղելութեան մասին Մեր հաւատարիմ հպատակներին և նրանց հետ միասին ամբառնում ենք առ Ամենաբարձրեալն Մեր ջերմ աղօթքները, որպէս զի Նորածինը յաջողութեամբ աճէ և զարգանայ։

Հրամայում ենք գրել և անուանել, բոլոր գործերի մէջ ուր հարկն է, Մեր Դուստր Մեծ Իշխանուհի Տատեանա Նիկոլայեվնային Նորին Կայսերական Մեծութիւն։

Տրուած Պետերգոֆում, մայիսի 29-ին, Քրիստոսի ծննդեան հազար ութհարիւր իննսուն եօթներորդ ամի, իսկ Մեր Թագաւորութեան երրորդ տարին։

Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան ձեռքով ստորագրուած է.

«ՆԻԿՈԼԱՅ»

* * *

Մայիսի 29-ին, հինգշաբթի երեկոյեան ժամը 7 ից Թիֆլիզում սկսեց տեղալ յորդ անձրեւ եւ գոյացաւ այնպիսի հեղեղ որ Թիֆլիզի շատ փողոցներով անցնել անհնարին էր դարձել Օլգինսկի փողոցի վրայ տրամվայի երթևեկութիւնը դադարած էր, որովհետև րելսերը մնացել էին լեռներից հոսող հեղեղի բերած աւազի, տղմի և քարերի տակ. Միքայէլեան փողոց ընդմիջող փողոցներով գետեր էին հոսում։ Նիկոլայէվսկի փողոցի վրայ, Ենֆիանջեանի ծխախոտի գործարանի մօտ հեղեղը մի մարդու քշեց և ձգեց Քուռը, դիակը դեռ ևս չէ գտնուած։ Նաւթլուղում հեղեղը քշեց մի ֆուրգոն, որի մէջ կային տասն և ինն զինուորներ, որոնք վերադառնում էին հունձից, ֆուրգոնը միջի զինուորներով, որոնք պատկանում էին Նիժեգորոդսկի գնդին, և ձիերով զոհ գնաց Քուռ ալիքներին։ Քաղաքի Նովայա Գոլլանդիա կոչուած թաղում մի հին տուն քանդուեց, բայց բնակիչներին վնաս չեղաւ։ Այդ օրը ահագին իրարանցումն կար Ս. Դաւիթի վանքում, այդ եկեղեցի տօնի պատճառով թէ վանքի գաւթում և թէ լերան վրայ ժողովուած էր տասնեակ հազարաւոր ամբոխը ամեն դասակարգի և ամեն հասակի։ Ցանկարծ սկսուող հեղեղը հարկադրեց նրանց ամենքին խելագարուածի պէս վայր վազել լերան գլխից փոքրիկ կածանով և պաշտպանութիւն գտնել Թագմինգա կոչուած թաղի տներում։ Բարեբաղդաբար առանձին վնաս չեղաւ ժողովրդին։

* * *

Աւազակների յանդգնութիւնը Գանձակի նահանգում հասնում է մինչև այնտեղ, որ նրանք սկսել են յարձակուել կառավարչական պաշտօնեաների վրայ և նրանց ևս կողոպտել։ Այդպէս, Շուշուց գրում են «Տիֆլ. Լիստ.» ին, թէ մայիսի 21-ին Եաղլուեցի երկու զինուած Թաթարներ յարձակուեցին ոստիկանական վերադիտիչ պ. Իշխանեանի վրայ, երբ վերջինս վերադառնում էր վերին Թաղաւարթ գիւղից։ Աւազակները կողոպտեցին պ. Իշխանեանին առնելով նրանից ամեն ինչ և ապա սկսեցին քարշ տալ նրան դէպի մօտակայ ձորի աղբիւրը՝ սպանելու նպատակով։ Բարեբաղդաբար այդ տեղին մօտիկ հայեր կային դաշտում, որոնք լսելով Իշխանեանի աղաղակները, օգնութեան հասան և ազատեցին նրան մահից։ Աւազակներն իսկոյն փախան անտառը տանելով իրանց հետ կողոպտած առարկաները։ Թէև օգնութեան հասնող հայերը ճանաչել են Եաղլուեցի Թաթարներին, սակայն նրանք մինչև այժմ չեն ձերբակալուած։

Այս օրերս—աւելացնում է Թղթակիցը—տարին ոստիկանական պաշտօնեայ Կօզանը գիշերը քաղաքը պտըտելիս վիրաւորուեց երեք գողերից։ Ցանցաւորները ձերբակալուած են։

* * *

Աբասթումանի աւազակներին հանգստութիւն չեն տալիս Շուշուայ գաւառի աւազակների դափնիները։ Նրանք ևս սկսել են յարձակուել կառավարչական պաշտօնեաների վրայ նրանց կողոպտելու նպատակով։ Մայիսի 25-ից գրում են «Նով. Օբ.»-ին թէ Ծալաշկուրայի մօտ աւազակները յարձակուեցին 7 րդ դիստանցիայի կառավարիչ պ. Դեմեննեվի վրայ, բայց կառապանն այնպէս արագ քշեց կառքը, որ աւազակների ձգած գնդակները չհասան նպատակին։ Այնտեղ անյաջողութեան հանդիպելով՝ աւազակները կողոպտեցին ճանապարհի բանուորներին և բազմաթիւ անցորդների և մինչև այժմ էլ անպատիժ մնում են Ցխրա Մուխրի կոչուած տեղը։

* * *

Վերջերս բացուել է, որ Կովկասի գինեգործութիւնը ծանր հարուածահարութեան է ենթարկվում եւրոպական, գլխաւորապէս ֆրանսիական գինեվաճառների կողմից։ Վերջին տարիներս մեծ քանակութեամբ գինի է տարվում Կովկասից արտասահման, մանաւանդ դէպի Բորդո (Ֆրանսիա)։ Այժմ յայտնուել է, որ Ֆրանսիայի գինեվաճառները գնելով Կովկասեան գինին, Բօրդոյում լցնում են նրանց արտասահմանեան շիշերի մէջ և յետ ուղարկելով Կովկաս վաճառում են նրանց թանգ գնով իբրև արտասահմանեան գինի։ Պետերբուրգի «Գինեգործութեան օժանդակիչ ընկերութիւնը» իմանալով այդ, միջնորդում է ելմտից նախարարին, որ Կովկասից արտահանուած գինու վրայ մաքսն աւելացնուի։ Բայց մեզ թւում է, որ այդ միջոցը նպատակայարմար չէ, որովհետև դրա վնասը կըընկնի մեր երկրի արդիւնաբերութեան վերայ։ Ոչ թէ մաքսը պէտք է աւելացնել, այլ պէտք է կօնտրօլի ենթարկել արտասահմանից ստացուած գինիները։

* * *

Գաւառական դեղատների վրայ հսկողութեան պակասութիւնը վաղուց զգալի է. բազմաթիւ օրինակներ են պատահել, որ դեղագործութիւնից ոչինչ չհասկացող երեխաներ դեղեր պատրաստելիս քինինը չափել են մկնդեղի հետ... Տեղական բժիշկների բողոքը միշտ մնացել է ձայն բարբառոյ յանապատի։ Գաւառական դեղարանի անկանոնութեան մի նոր ապացոյց հաղորդում են «Նով. Օբ.» լրագրին Խօնիից, ուր վերջերս յանկարծական վերադննութեան է ենթարկուել դեղատունը։ Վերադննութեան ժամանակ ի միջի այլոց նկատել են, որ հացի գեղի փաթեթների վրայ գրուած է այն կշիռը, որով մկնդեղ են կշռում... Իսկ գեղը պահվում էր գրեթէ բացօդեայ, դեղատոմսերի համարները բոլորովին չփաթուած են, այնպէս որ շատ անգամ երկու զանազան դեղատոմսեր նոյն համարներն են կրում և այլն և այլն։

* * *

ԿԱՂԶՈՒԱՆ 27 մայիս

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Պարտք եմ համարում յայտնել, որ ամսոյս 24-ին այստեղ հասան Տաճկահայոց վեց ընտանիք բաղկացած 27 հոգուց։ Սրանից մեծ մասը երեխաներ են, որ ամեն մի օգնութեան կարօտ են։ Այս 27 հոգու մէջ կան այնպիսի անձնաւորութիւններ, որոնք ունեոր են եղել և միմիայն այս վերջին ամիսներս թալանուած։

Սրանք գաղթել են հետևեալ կողմերից.

1 ընտանիք 6 հոգով՝ Հացից գիւղից, Մշի կողմից։

1 ընտանիք 4 հոգով՝ Հերանայ գիւղից, Ալաշկերտի կողմից։

2 ընտանիք Արճիշուց 8 հոգով։

2 ընտանիք Սենայից 9 հոգով։

Այս խեղճերին առ ժամանակ հարկաւոր են թէ ուտելիք եթէ հագնելիք, բոլորովին մերկ են, բայց որտեղից և թէ ումնից սպասեն, քանի որ Կաղզուանը չէ կարող բաւականութիւն տալ։

Այստեղի բարեգործական ընկերութեան տեղական ճիւղը կարելի է ասել, որ հասել է իր ճգնաժամին, չկան վարչութիւնը, որովհետև գործի մէջ են մըտնում այնպիսի անձնաւորութիւններ, որոնք փոխանակ օգուտ բերելու քայքայումն են առաջ բերել։ Այս մասին յայտնուած է և ընկերութեան խորհրդին, բայց ինչպէս երևում է խորհուրդն էլ շատ զբաղուելու ժամանակ չունի ճիւղեր վերաբերմամբ, այլ զբաղուած է Հ. Առաքելեանի խնդրով։

Իսկ եթէ խեղճ գաղթականները ինչով պիտի կարողանան առժամանակ իրանց կեանքը ապահովել չգիտենք։ Որովհետև խեղճերի դրութիւնը անտանելի է, ուստի Բարեգ. Ընկեր. տեղական ճիւղի նախկին վարչութիւնը, առանց սպասելու խորհրդի կարգադրութեան, բաժանում է ամեն օր հաց և մտադիր էլ է մի թեթև հագուստ հասցնել։

Լսել ենք, որ այստեղ գաւառապետին ուղարկուած է փող՝ գաղթականներ-

ՖԵԼԻԵՏՈՆ

1. ԽԵՆԹԸ

(ՄԻ ԽԵԼՕՔԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

I

Վաղուց էի կասկածում որ նա խենթ պիտի եղած լինէր։ Մանկութիւնից նրա մէջ ինչ որ այլանդակ բաներ էին անցնում։ Դրացի էինք և փոքր հասակում խաղում էինք միմեանց հետ։ Շատ չարն էր. երբէք հանգիստ նստել չգիտէր. գոհունակութիւն ասած բանը չէր ճանաչում։ Ամենայն ուժով, մտքի ամբողջ կենտրոնացումով կըձգտէր մի բանի. գլուխը կըկոտրէր որ այդ ուզած բանին հասնի և երբ նրա տէրը լինէր, իսկոյն կըսկսէր տխրել.

—Իսկ այն կողմն ինչ կայ, կըհարցնէր միշտ։

Ես երբէք չհասկացայ նրան։

Աշխոյժ էր և կրակոտ. այնպէս անհամբեր, որ Աստուած ազատի։ Բանն այն է, որ իր տան մէջ էլ նրան չէին սիրում, որովհետև ոչ մի անկիւն չէր թողնիլ որ ծածուկ մնար իրան։ Հետաքրքիր էր, ոչ մի արգելքի առաջ կանգ առնել չգիտէր. կոտրում էր կողպէքներ, դռներ և ինչ որ ուզում էր տեսնել—տեսնում էր, յետոյ էլ գնում ծնողների մօտ և պարծենալով ասում որ տեսել է ամեն ինչ։

Հէնց որ մի բարձր տեղ, մի բարձր ծառ, մի տանիք տեսնէր, կըկպչէր մեր օձիքից որ բարձրանանք այնտեղ։ Դա իր մեծ ախտն էր։ Անպիտանը. վախ ասած բանը չունէր. կապիկի պէս բարձրանում էր եկեղեցիների գմբէթների վերայ... Մի խօսքով, ջղային դրութեան մէջ էր ընկնում եթէ տեսնում էր մի բարձր տեղ, ուր չէր բարձրացել ինքը։ Ասացի որ մեզ էլ էր ուզում քաշ տալ իր ետևից։ Վա՜յ էր եթէ վախ յայտնէինք և կամ չբարձրանայինք։ Բոլորիս հետ կըկռուէր. եթէ ծեծ անգամ ուտէր՝ էլի կըկռուէր, կընախատէր, վախկոտ կըկոչէր...

Բանը նրանումն է որ ծառի վրայ մագլցել չգիտէր.—«կապիկ խօ չեմ կամ կատու»—կասէր, յետոյ կերթար մի սանդուխ կըգտնէր, արիւն-քրտինք մըտնելով քաշ կըտար ծառի մօտ, կըկանգնեցնէր նրան և կըբարձրանար։ Այդ բոլորը նրա ոյժից վեր էին, բայց նա անում էր զարմանալի յաջողութեամբ։ Քրտինքն աղբիւրի պէս հոսում էր երեսն ի վար, աչքերը մեծանում էին, քունքի երակները ուռում, բայց նա ձեռքից սանդուխը բաց թողնել չգիտէր։ Քաշ էր տալիս իր փոքրիկ ձեռներով. եթէ յոգնում էր, կանգ էր առնում և սանդուխի կողքին նստում, քիչ շունչ առնելուց յետոյ նորից ելնում և չէր դադարում, մինչև որ ծառի ծայրը չբարձրանար։

Երբ հասնում էր ծայրին, ընտրում էր ամենաբարձր ճիւղը—չէր էլ վախենում որ կոտրուի—գնում էր դէպի նա, հենում և ժամերով զմայլմամբ բարձրերը դիտում։

Պատահում էր, որ նրան չարչարելու համար, սանդուխը ետ էինք քաշում և ցած ձգում, երբ նա ծառի վրայ էր։ Չէր յուզվում. ուսերն էր թօթվում, արհամարհաբար ժպտում ու շարունակում հիացումով հօրիզօնը դիտել։

Խենթ էր, Աստուած վկայ, հէնց մանկութիւնից սկսած խենթ էր նա։

Ծնողները միշտ ծեծում էին նրան՝ այդ բարձրանալու ախտի համար։ Ցիշում եմ որ մի անգամ էլ ծառի կէսից ցած գլորուեց և երկու շաբաթ անդամալոյծի պէս պառկեց։ Բայց երբ լաւացաւ, իր առաջին գործն էր նոյն ծառը բարձրանալ. և մինչև որ նրա ծայրին չհասաւ, ձեռք չքաշեց նրանից։

Մեր տան կողքից սկսած բարձրանում էր մի լեռ։ Շատ բարձր չէր այդ լեռը. աւելի մի մեծ բլրակ էր և բաւական հեշտ՝ վրան ելնելու։ Գագաթին ունէր մի տափարակ ժայռ. եթէ Հայկը—այդպէս էր նրա անունը—կորսուած լինէր, պէտք էր այդ ապառաժի վրայ փնտռել նրան։ Պառկում էր նա այնտեղ և դէմքը երկնքին՝ դիտում անհունութիւնը։

Ցիշում եմ որ մի անգամ հայրը բարկացած գնաց ինձ հետ նրա ետևից և ականջները սաստիկ ոլորեց։ Հայկը ասես լաց եղաւ. երբէք. այլ երբ հայրը մի քանի նախատինքներ տեղալուց յետոյ, ձեռքերը բռնած իջնում էր—հարցրեց.

—Հայրիկ, այն ամպերից յետոյ ինչ կայ...

Միասին էր որ ուսումնարան մտանք։ Ուսումնարանումն էլ նա նոյն խենթը մնաց։

Այնպիսի դժուար, անհասկանալի հարցումներ էր տալիս վարժապետներին, որ նրանք համբերութիւնից դուրս էին գալիս և երբեմն էլ սաստիկ պատժում նրան։ Դասերը սովորելու մէջ շատ ընդունակ էր, միայն թէ ոտանաւորներ չէր սիրում սերտել։ Հակառակի պէս էլ մի վարժապետ ունէինք, որ անդադար ոտանաւորներ էր անգիր անել տալիս և եթէ բան է, չգիտենայինք, ամէն մի չը գիտցած տողի համար մի - մի քանոնի հարուած էր խփում ձեռքներիս։ Ցիշում եմ որ ամենից շատ հարուածը Հայկն էր ստանում. բայց երբ ձեռքերը լաւ կարմրում էին—չէր էլ լաց լինում—նայում էր ուսուցչին և բարկացած՝ ասում.

—Ոտանաւորներ չեմ ուզում։

—Ինչպէ՞ս թէ չես ուզում, անպիտան, գոռում էր ուսուցիչը—քո կամքն է։

—Սովորողը ես չեմ, արհամարհանում էր Հայկը—ինչքան կուզէք ծեծէք, չեմ սովորիլ։

—Ինչու ախր, մի՞թէ դժուար է միտը պահել։

—Դժուա՛ր... հեգնում էր Հայկը—մի քանի բոպէի մէջ կը սովորեմ. բայց. . . չեմ ուզում, շատ սեղմուած բան է երեւում ինձ։

Եւ իսկապէս շատ յետոյ էլ, երբ նա մեծացաւ, համալսարանից վերադարձաւ, ասում էր ոտանաւորներն ընդհանրապէս և նրանց համար ասում էր թէ «ինչու են աշխատում սեղմել միտքն ու զգացմունքները չափի և սահմանի մէջ...» Զմայլմամբ էր կարդում միայն մի քանի բանաստեղծների, մանաւանդ Վիկտոր Հիւգօին և Բայրընին։

—Բարձր են դրանք... ասում էր նա։

Միշտ բարձրութեան ձգտելու այդ ախտն էր, որ մեծանում էր իմ խեղճ Հայկի մէջ և խենթացնում նրան։

II

Այդպէս, երբ տարրական դպրոցը վերջացրեց, նրա ծնողները հեռացան մեր քաղաքից. այնքան հեռու, որ երկար տարիներ չտեսայ Հայկին և չլսեցի էլ նրա մասին։

Անցան տասնեակ տարիներ։ Ես շատ բան տեսայ, շատ ման եկայ։ Գործերս յաջող գնացին, մի լաւ պաշտօն գտայ և էհ, Աստծու տուածից մի քիչ էլ հարըստութիւն դիզեցի։

Բայց Հայկին մոռացայ։ Քսան և եօթ տարեկան էի և գործերս փայլուն դրութեան մէջ դրած, հանգիստ կեանք էի վարում, երբ յանկարծ հանդիպեցի նըրան։

Ի՞նչ էք կարծում, ինչով էր զբաղվում...—վարժապետութիւնով։ Փա՛հ. . . տարիներով տանջուել այնպէս, ինչպէս նա էր տանջուել—ինձ պատմեց բոլորը—գնալ մայրաքաղաքներ, բարձրագոյն կրթութիւն ստանալ և ապա ուսուցի՛չ... Միշտ նոյն խենթն էր մնացել։ Երբ հանդիպեցի նրան, մոռացել էի նրա բարձրութեան ձգտելու ախտը։ Խնդրեցի որ ինձ մօտ գայ։ Երկար խօսեցինք, փոխվել էր խեղճը. զգալի կերպով դէպի գերեզման էր գնում։ Ես լսել եմ որ խենթերը ամենից աւելի ծիւրախտ են սատանում։ Կարծում եմ որ նա էլ ծիւրախտ պիտի ունենար։ Աչքերը նոյն երազող, խոր և բոցավառ արտայայտութիւնն ունէին։ Բայց այնքան էլ դեռ գիժ չէր։ մաքուր էր հագնվում և շատ քաղաքավարի էր բոլորի հետ։ Այստեղ իսկ նա իր խենթութիւնն էր ցոյց տալիս։ Եթէ, բան է, անցնելու ժամանակ մի բեռնակրի անգամ դիպչէր, գլխարկը կըհանէր և ներողութիւն կըխնդրէր։

Բաւական մտերմացանք. գալիս-գընում էր ինձ մօտ յաճախ, լսում էր ինձ մօտ եկող միւս հիւրերի խօսակցութիւնը, երբեմն խառնվում էր և վիճաբանում. բայց երբ տաքանում էր, Աստուած ազատի, այնպիսի այլանդակ, անսովոր—իր ասելով «բարձր»—բայց պարզապէս ծիծաղելի գաղափարներ էր յայտնում, որ հիւրերս միմեանց երեսին էին նայում և լուռ մնում. մինչև իսկ մէկը մի օր ասաց.

—Ախպէր, էս գժին ինչպէս ես տուն թողնում։

Գիժ էր, այո, Հայկը—դրան խօսք չկար—բայց ճշմարիտն ասել, լաւ, անվնաս տղայ էր։ Նրա ասածները միայն ծիծաղ էին շարժում։ Երբեմն, ի հարկէ, վիրաւորում էին պատուաւոր մարդկանց, բայց երբ վերջիններս տեսնում էին որ Հայկը խենթ է, ներում էին նրան։

Միշտ տխուր էր նա. շատ քիչ էր ծիծաղում և անդադար երազում էր։

Մի օր էլ, երբ միասին զբօսնում էինք դաշտում—ասաց.

—Է՛հ, եղբայր, այս ինչ ցած ու նեղ տեղերի վրայ էք բնակվում կամ զբօսնում. մի՞թէ ազատ բարձրութիւններ չկան այս երկրում։

Ա՛հ, բարձրութի՛ւն... Ահա նորից Հայկիս խենթութիւնը բռնեց։

—Էլի նոյն խենթն ես, դիտեցի ես։

—Խե՛նթ. գոչեց նա—բարձրութիւն, ազատութիւն սիրելը խենթութիւ՞ն է։

—Ի հարկէ, եղբայր, քանի որ եղած տեղումդ, եղածդ դրութեան մէջ հանգիստ ես, ոչ ոք չէ վնասում քեզ, ինչո՞ւ ի զուր գնալ բարձրերում, նեղութիւն քաշել, յոգնել, վտանգների ենթարկուել...

Ժպտեց և չպատասխանեց։

—Բարձր տե՛ղ ես ուզում, հեգնեցի ես—ահա արեգակը, բարձրացիր այն տեղ։

—Շա՛տ կ'ուզէի... պատասխանեց լրջութեամբ—բայց . . . արեգակը շատ ցածր է դեռ։

—Արեգակը ցա՞ծր է . . . ինչե՞ր ես դուրս տալիս, եղբա՛յր, մի՞թէ արեգակից բարձր բան կայ։

—Ինչո՞ւ չէ, ասաց նա—միլիոնաւորներ կան.

—Ինչե՞ր, օրինակ.

—Զանազան մեծութեամբ երկրագնդեր, աշխարհներ, արեգակներ, որոնց մօտ մեր արեգակը մի փոշի է։

—Շատ լաւ սիրելի, հեգնեցի նորից—բարձրացիր դրանցից մէկի վրայ։

—Նրանք էլ ցածր են դեռ։

—Վա՜հ... մի՞թէ էլի բարձր կայ։

—Ի հարկէ... Քանի բարձրանաս, այնքան դեռ ցածր ես, դեռ էլի կայ բարձրանալու։ Եւ այսպէս միշտ դէպի վե՛ր, դէպի վեր...

Նայեցի դէմքին։ Աչքերը այնպէս երազում էին և այնպէս ոգևորուած, որ հարկ համարեցի հանգստացնել նրան։

—Լա՛ւ, լաւ ասեցի—թող քո ասածը լինի. գնա՛ դէպի վեր, միշտ դէպի վեր. . .

—Իսկ դու՞, հարցրեց նա յանկարծ ինձ դառնալով։

—Ե՞ս, ասացի վախեցած—չէ, եղբայր, իմ տեղս շատ լաւ է. փառք Աստծու, տուն ու տեղ ունիմ, ռոճիկով էլ փող տուած բանկում. ստամոքս էլ հիւանդ չէ։ Դու կուզես գնա, իմ տեղս շատ հանգիստ է։

—Բայց այդպէս ցա՜ծ...

—Ով որ ցած տեղերում ապրի—վարդապետեցի ես—նա ընդ միշտ՝ ընկնելու վտանգից ազատ կըլինի։

Լռեց և երեսը դարձրեց։ Քիչ յետոյ լսեցի որ ասում էր տխրութեամբ.

—Աստուա՜ծ իմ, որքա՜ն տխուր է մենակ լինելը...

III

Ինչպէս որ տարօրինակ էր խենթը, այնպէս էլ տարօրինակ կերպով անհետացաւ։ Ականատես էի նրա կորսուելուն։

Մի օր, երբ մեր դաշտից սկսեցինք լեռները բարձրանալ, կանգ առինք առաջին բլրակի գլխին։ Ցոգնել էի, ուզում էի վերադառնալ։ Բլրակից այն կողմ փռվում էր մի դաշտակ, որից յետոյ բարձրանում էին հսկայ և բարձր լեռները։ Սկսելով բլուրներից, լեռնաշղթան հետզհետէ իր ամենաբարձր գագաթով ամպերն էր գցվում և արևի ճառագայթ-

րին բաժանելու, բայց թէ ինչու մինչև այսօր չի բաժանուած, այդ յայտնի չէ մեզ:

Ար:

* *

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Ցաւում եմ որ թէ մասնաւորապէս Իգդիրից և թէ առ հասարակ Սուրմալու գաւառից չարաչար տխուր լուրեր և տեղեկութիւններ հաղորդելու սահպուած եմ: Մեր գաւառապետ Բօղուսլավսկին ծերակոյտը (սենատ) դատի է ենթարկել Մահսեսի Բաղդասարեան Գէորգին տանջելով ծեծելու և հաշմանդամ դարձնելու համար (за истязаніе и за увѣчіе), այլ և Ղարաղօյունի Թուրքաբնակ գիւղի մի Թրքուհու սպանութիւնը ծածկելու պատճառով:

Անցեալ տարի սահմանի քրդերը Դաշբուռունի հայաբնակ գիւղի նախիրը յափշտակեցին: Այս ամիս քիւրդ աւազակներ յափշտակեցին Բուլաղբաշի քրդաբնակ գիւղից 300 ոչխար և մի հովուի սպանեցին: Ղարաքաղլու Թուրքաբնակ գիւղի նախրչուն սպանելով, նախիրը քշեցին տարան Տաճկաստան, ինչպէս և վերոյիշեալ բոլոր յափշտակած կենդանիները:

Մի քանի օր առաջ էլ լուր հասաւ որ Աբազգեօլ հայաբնակ գիւղի նախիրն էլ աւազակները յափշտակել են և կամեցել են Տաճկաստան տանել:

Դաշբուռուն և Ղարաքաղլու, ուրեմն հայ և Թուրք գիւղերի յափշտակութեան համար ոչ մի քայլ չեղաւ, մինչդեռ Բուլաղբաշի քրդաբնակ 300 ոչխարների համար մեր գաւառապետը Բայազէտ (Տաճկաստան) ուղարկեց Բուլաղբաշու հասարակութեան գզրաւագ քիւրդ Ճամշաղլինովին և նորա եղբայր Ալեքսաշկուն հասարակութեան գզրաւագին (երկուսն էլ պ. գաւառապետի նշանակած), կարծեմ և իւր Թարգմանին: Սրանք յափշտակուած 300 ոչխարների փոխարէն բերին միայն 100:

Սրանց Հին-Բայազէդից վերադառնալուց մի քանի օր յետոյ տեղի ունեցաւ մի մաքսանենգութիւն, ուր մի անձն սպանուեցաւ: Տեղեակ անձինք ուզում են կապ գտնել այն ուղևորութեան և այս մաքսանենգութեան մէջ: Հրաւիրում ենք գաւառապետի ուշադրութիւն այս բանի վրայ:

Երկու Ճամշաղլինով քուրդ գզրաւագները, ինչպէս տասցի գաւառապետի կողմից են նշանակուած: Մի հանգամանք միայն չպէտք է մոռանալ, որ գաւառապետին քաջ յայտնի պէտք է լինի, այդ այն է, որ Ճամշաղլինովները Տաճկաստանում սահմանագլխին մօտ ապրող ազգականներ ունին: Ուստի յարմարագոյն եւ է այնպիսի անձինք նշանակել գիւղաւագ, որոնք բարեկամական կամ ազգակցական կապերով կապուած չեն Տաճկաստանում սահմանին կից ապրող քրդերի հետ: Այս բանի վրայ էլ հրաւիրում ենք մեր գաւառապետի ուշադրութիւնը:

Իգդիրու հասարակութեան գզրաւագը մի առ ժամանակ հեռացուեցաւ պաշտօնից, այժմ դարձեալ ստանձնել է իւր պաշտօնը: Սրա վրայ շատ գանգատներ կան: Գողութիւն Իգդիրում անպակաս է: Ուաց հինգշաբթի մի խանութ էին ծակել, պահապանը (հասաս) մատնացոյց է անում իւր տեսած գողի վրայ, բայց մեր խելօք և հաշտւով գզրաւագը ծեծում է պահապանին կամ ինչպէս ոմանք ասում են, գողն ինքը գզրաւագի առաջ ծեծում է պահապանին, որին խեղճը ճանաչել էր, իսկ գզրաւագը և ոչ մի չառ է ասում գողին:

Աւելի վատ է գիւղական տանուտէրների (ռէս) գործը: Այս երեք ամսում մեր գաւառապետը 4 տանուտէր փոխել տուեց:

Մինչև գաւառապետ Բօղուսլավսկիի գալը հասարակութիւն ինքն էր ընտրում և իւր գրագիրը, որ շատ արժան էր լինում, քանց այժմ երբ գաւառապետն ինքն է նշանակում: Օրինակի համար առաջ Իգդիրի հասարակութեան գրագիրն ստանում էր 200 ռ., իսկ այժմ 600, այլև բնակարան, ծառայ եայլն:

Որ այսպիսով, մի մասնաչափ ան գամ, գործը չէ բարուոքուել, ապացոյց է այն, որ Գիւլլիջայի հասարակութեան գրագիրը, որ ոչ մի տեղ չէ սովորել, ինչպէս հաւատացնում են, երկու տարուան ընթացքում իւր բացի 9 անդամից կազմուած ընտանիքը կերակրելուց մի ջրաղացք, այլ և մի գիւղէ գնել և պարծեցել է շատերի առաջ որ 5000 ռ. էլ այժմ փող ունի, այն ինչ գրագրութիւնից առաջ, ինչպէս յայտնի էր, հայրական պարտք ունէր:

Այսուհետև ի հարկէ զամանալի չպէտք է լինի, ասում են շատերը թէ՝ ինչու Ց. Արտազովը օրէնքի և հասարակութեան կամքի հակառակ գիւղական դատաւոր է նշանակուած, այդ բաւական չէ, ձգտում է զանազան միջոցներով ջրլեա ընտրուել, իսկ ուղղին Բ. Արտազովը՝ երկրագործ (?!?) դառնում է անպաշտօն ծառայող: Կամ ինչու Իգդիրի հասարակութեան գզրաւագը մօռած իւր առետուրը, որ Իգդիրում այնպէս բանուկ է, ինչպէս տեղացիք ասում են, զուռ է և ոչ ուրիշ շատ տեղերի նման սուտ, այժմ գզրաւագ է դարձել: Անշուշտ այդ պարոնները կըփարատեն գէթ մեր տարակուսանքը: Գզրաւագը փոխանակ «Արձագանքի» մի մի համարները յարքունիս գրաւելու, որպէսզի հասարակութիւնը չկարդայ, կ'աշխատի մեզ ցոյց տալ թէ՝ հասարակութեան որ նախնական վճռով է նրան 300 ռ. ռոճիկ որոշուել, և հերքել Իգդիրի մասին հաղորդածները եթէ անճիշտ են:

Հապա, ստապրէք իջէք, դեռ շատ բան կլինի ասելու: Դուք սպառնում էք «Արձագանքը» Ռ.-ի միջոցով դադարեցնել տալ: Այդ ձեր բերանի բանը չէ ի հարկէ, և մենք շատ լաւ գիտենք քամին որտեղից է փչում: Աւելի լաւ է որ ջանաք հերքել... իսկ եթէ չէք կարող, գէթ մի լաւ բան արէք յօգուտ հասարակութեան և այն ժամանակ «Արձագանքը» ինքը ոչ միայն կըդադարի ձեր մասին աննպաստ լուրեր հաղորդելու, այլ և Թերես բախտ կ'ունենայ գէթ մի լաւ բան էլ հաղորդելու իւր ընթերցողներին, և գիտէք այդ ինչ երջանիկ օր կըլինէր Իգդիրի հասարակութեան համար:

Տեղացի:

21-ն մայիսի

* *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պ. Խմբագիր.

Որովհետև «Արձագանք» ի 59 համարի Ղազախի թղթակցութեան մէջ յիշուած Կօթի գիւղի մի այրի կնոջ փախցնելու մանրամասնութիւնները հասել են ինձ, որոնք վերին աստիճանի հետաքրքրական են, ուստի թոյլ տուէք մի քանի մանրամասնութիւններ հաղորդել ընթերցողներին:

Ղազախում ցորեանի և գարու դէզ կրակել, գոմէշն ու եզը—լծկանը կամ կթի կովը հանգումը մորթելն ու կաշին քերթել ու տանել կամ հէնց մորթած թողնելը, այգիների վազեր կտրտել, մրգատու ծառերը կլպել չորացնելը, խոտի ահագին դէզը կրակ տալ, մարդը, ամբողջ ձմրան պաշար պարունակող շինութիւնը կրակ տալ՝—սրանք ցաւէ ասել, սովորական երևոյթներ են. Ես չեմ յիշում, ի հարկէ, գողութիւնն ու աւազակութիւնը, որ այդ գաւառում գաղթնակէտին է հասած, բայց ընտանեկան պատիւն չօշափելը, մանաւանդ հայերի մէջ, շատ հազուագիւտ է լինում:

Ամառը՝ մայիսի 1-ից սկսած մինչև օգոստոսի վերջը, գիւղերում բացի պառաւ կանանցից և տղամարդկանցից, ջահէլ կին ու աղջիկ չէք գտնիլ՝ նրանք բոլորը սարումն են մեն մենակ ալաչուխներն ու դագաների մէջ խոր-անտառներում. բայց ոչ որ նրանց մազին չի դիպչիլ: Ամենաահարկու աւազակապետները, Դալ Աղէն, Մուրսաղուլին, Իրղէն, Իսմէիլը, Քարիմը և այլն և այլն միշտ առառ ժամանակ շրջել և ապրել են Ղազախի թանձրախիտ անտառների խորքերում և դրանք կերակուր են ստացել մեր հարսներից: Նրանք օբիցը մի վերստաչափ հեռու իջնում են ձիուց և մարդ ուղարկում օբէն և խնդրում, որ իրանց համար հաց ուղարկեն, որև ստանալով հացն ու մածունը, կաթն ու պանիրը, ուտում, խմում ու հեռանում և ոչ մի դէպք չեմ յիշում, որ դրանցից մէկը մեր հարսներից մէկի պատուին դիպած լինի: Այս դեռ անտէր, անտիրական սարումը, իսկ գիւղի մասին խօսք անգամ լինել չի կարող: Բայց չերկարացնեմ:

Ամսոյս 22-ին, գիշերը, ժամը 3 ին Ոսկէպարցի Խէչօ Ուհանէսովն, 10 ձիաւորով ներս է մտնում Կօթի գիւղ և մտնում է Ջանվելեանց Արութինի տունը, որ նրա այրի աղջիկ Գարանին յափշտակէ: Խեղճ Գարանը 9 տարի է չի դիջանում ոչ իւր ծնողների և ոչ սկեսուրի աղաչանքին ամուսնանալու, նա աչքը ճամբին սպասում է իրան ամուսնու Ղազարի գալստեան, որ աքսորուած է Սիբիր: Վերջապէս մի ամիս առաջ յուսահատուած յայտնում է իւր համաձայնութիւնը և նշանվում Բարվարեցի մէկի վրայ, բայց բաղդը կտրած է լինում:

Խէչօն, որ մտնում է սրահը, Գարանի ճիչը ու աղաչանքը զարթեցնում է իւր եղբայր Մարտիրոսին, բայց սա մի հարուած ստանալով վայր է ընկնում: Ոչ որ չի լսում Գարանի լացն ու կոծը, աղաչանքն ու պաղատանքը, բերդանի և այնալուի տրաքոցը կասեցնում է ամենքին և Գարանին յափշտակում, տանում են:

Ընթերցող, բոլորը կըվկայեն որ Ղազախում Կօթի գիւղը, որ բաղկացած է 300 տնից՝ ամենաքաջն է: Կօթի գիւղացուց վախենում է թէ Թուրքը և թէ հայը: Ճանապարհին գնալիս բաւական է որ իմաց տաս թէ Կօթի գիւղացի ես, ոչ որ չի համարձակուիլ քեզ մօտենալ, համոզուած լինելով, որ մինչև քեզ չի սպանէ, քո ձեռից բան խլելը անհնարին, սա փաստ է:

Ասացէք խնդրեմ, ինչպէս պատահեց, որ մի օտարական համարձակուեց այդ կտրիճ գիւղը մտնել, թէկուզ 100 ձիաւորով: Ոչ, անպայման տեղացի երիտասարդների մատը խառն է այս գործում: Սպասելով գործի քննութեան ելքին, որ շուտով կըպարզի ամեն բան, պիտի ասեմ, որ խիստ պատիժ պիտի ենթարկել յանցաւորներին, քանի որ դա օրինակ կըդառնայ և կըկարէ գիւղացու սար ու դաշտ գնալ գալը:

Այս օրին էլ արժանացանք:

Հ. Պետրոսեան:

31-ն մայիսի 1897 թ.
Թիֆլիզ:

* *

Տաղանդաւոր ջութակահար պ. Նալբանդեանցը, ինչպէս մեզ հաղորդում են Պետերբուրգից, վերջին ժամանակներըս մասնակցելով այնտեղի զանազան նուագահանդէսներին, ահագին յաջողութիւն ունի. նրա գեղեցիկ խաղը մեծ տպաւորութիւն է գործում:

* *

ՕԴԵՍԱՅԻՑ հեռագրում են, որ տեղական անգլիական բողոքականաց եկեղեցու մէջ կախուել է նոյն եկեղեցու պաստոր Փօրզը:

* *

Ուրբաթ, երկաթուղու երեկոյեան գընացքով Վիեննա ուղևորուեցաւ տաղանդաւոր երգչուհի օր. Ն. Պապայեանը:

* *

Ստացանք պ. Յովսէփ Կ. Ճանիկեանի մի նոր աշխատութիւնը «Դժողք» վերնագրով: Ինչպէս հեղինակն իւր յառաջաբանի մէջ ասում է, ներկայ «վէպ» գրելիս Միլտոնի «Դրախտ կորուսեալ»-էն խիստ սակաւ քանի մը խօսքեր միայն օգտուած է, մի մասն ուրիշներից է յառած, մնացեալ կամ երևակայութեան արդիւնք և կամ ազգային ժամանակակից դէպքերում պատկերներ և տպաւորութիւններ են իբրև երազի մէջ կըկնուած: Պ. Ճանիկեանի երևակայութեան և երազների հետ ծանօթանալուց յետոյ, կըխօսենք նրանց մասին:

Գիրքը բաղկացած է 133 փոքրադիր երեսներից և գինն է 40 կոպէկ:

* *

Ստացանք «Краткіе очерки по нефтопромышленно-заводскому счетоводству, А. Теръ-Каспарьянца», որ նաւթային գործարանական մի բաւական լաւ ուղեցոյց է հաշուապահների համար: Գիրքը տպագրուած է Պետերբուրգում և արժէ 1 ռուբլի:

* *

Քաղաքային նախկին ինժիներ պ. Չերժանովսկին դիմել է քաղաքային վարչութեան և խնդրում է իրան յանձնել Թիֆլիզի փողոցային սալայատակը կատարելագործուած սիստեմով:

* *

ԱՌԱՋԻԿԱՅ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

—

ԵՐԵՒԱՆ, 27 մայիսի.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Կան խնդիրներ ու հարցեր, որք Երևանին յաւէտ զբաղեցնում են և կան՝ որ հետաքրքրում է երևանցոց առ ժամանակ մի և ապա անհետ կորչում: Առաջին տեսակ խնդիրներին դասակարգիցն են, օրինակ, խըմելու մաքուր և առողջարար ջրի բազմաչարչար հարցը, որ երկար տարիներէ ի վեր՝ հանդոյն նորակառոյց եկեղեցւոյ թերի աւարտման՝ կիսատ պատատ դրութեան մէջ է և Աստուած մի՛ արասցէ, որ նա էլ այնքան երկար ու ձիգ տարիների շրջան բոլորէ՝ ինչպէս եկեղեցւոյ շինութիւնն է հոլովել ու տակաւին չէ վերջացել: Աստուած մի՛ արասցէ, ասում ենք, որովհետև մի փոքրիկ եկեղեցի, որի կառուցումը առ առաւելն 30,000 ռուբլի ծախք է պահանջում և 30 տարուան ընթացքում դեռ թերի է մնացել, ինչպէս երկիւղ չկրենք մաքուր ջուր խմելու բաղդին մօտիկ ապագայում արժանանալու նկատմամբ, երբ գիտենք, որ այդ ջուրը ձեռք բերելու համար պահանջվում է առ նուազն 50—120,000 ռուբլի, թէև ամենքս էլ գիտենք ու տեսնում ենք, որ Երևանի ազգաբնակութեան թիւը փոխանակ աճելու, բչանում է, այսինքն ծնվում է քիչ՝ մեռնում է շատ: Միով բանիւ մենք այն օտարոտի բնաւորութեան ու աներկիւղ կամքի տէր անձինքն ենք, որ մեռնելուց էլ չենք վախենում, ինչպէս չենք վախենում Աստուծոյ դատաստանից, որ իւր աղօթատունը յընթացս 30 տարիների կիսակատար ենք թողնում, առակ նշաւակի անելով մեզ մեր հարևան պարսիկների աչքում ցայն աստիճան, որ նրանցից մինը երբեմն ցանկութիւն է յայտնում իւր հաշուով աւարտել այն և յանձնել հայերին: Սրանք ակընյայտնի փաստեր են, որոց աւելի մանրամասն կըդառնանք մի այլ անգամ, խնդիրը աւելի ընդարձակ և պատմաբանօրէն ներկայելու խոստումով՝ «Արձագանքի» ընթերցողներին:

ների, իւր վրայի մշտակայ սպիտակութիւնը փողփողեցնում:

Հայկը երբ այդ տեսաւ, հիացմունքից գժուեց. բռնեց թևիցս և սեղմում էր որ գնանք «այնտեղ—բարձր»: Վազում էր նա, առաջ սրանում... իսկ ես գրեթէ գլորվում էի, քարշ գալիս գետնի վրայով:

Այդպէս նա քարշ տուաւ ինձ մինչև լեռնաշղթայի ստորոտը: Այնտեղ ես մնացի ընկած:

—Թող ինձ, եղբայր, ձայնեցի—ինչ ես ուզում ինձնից. ուզում ես բարձրանալ. համեցէք, գնա ուր որ կուզես և ինձ հանգիստ թող:

Ու գնաց, սրացաւ դէպի վեր: Նստածս տեղից տեսնում էի թէ նա ինչպէս հեւալով, բայց նոյն արագութեամբ և խենթային կամակորութեամբ բարձրանում էր: Ո՛ւր էր գնում այդպէս:

Ձուռով արեգակն էլ ծածկուեց ամպերով և ստուեր ձգեց լեռնաշղթայի վրայ: Շատ պարզ տեսնում էի խենթին: Նա գնում էր. երբեմն կանգ էր առնում շունչ քաշելու համար և ապա առաջ գնում, միշտ բարձրանում...

Ցաճախ անտեսանելի էր դառնում: Կարծում էի թէ գլորուել էր մի անդունդի մէջ: Բայց նա նորից երևան էր գալիս. Եւ գնում էր անընդհատ: Սկսեցի կանչել:

—Դարձի՛ր, եղբայր, գոչեցի—ո՛ւր ես գնում. այդպիսի բարձրութիւնների վրայ կըմրսես, քաղցած կըմնաս, մենակ կը լինիս:

Բայց նա գնում էր միշտ և առանց ետ իսկ նայելու: Մի՛ անգամ նստեց մի պառաւծի վրայ և ցած նայեց: Արևի մի աղօտ ճառագայթ, մի թխադոյն ամպի պատռուածքից անցնելով, ողողում էր նրա դէմքը:

Մազերը ծածանվում քամուց: Ձեռքը դէպի վեր, ինձ էր ցոյց տալիս սպիտակափառ բարձրութիւնները: Կարծես հրաւիրում էր գնալ, հետևել իրան:

Տեղիցս չշարժուեցի: Խե՛նթ էր:

Վերջապէս վերկացաւ նորից, մի րոպէ երեցրեց իւր երկար ստուերն ու ծածանուող մազերը, ապա քայլեց առաջ և հետզհետէ հեռանալով՝ աներևութացաւ դէպի բարձրաբերձ գագաթները... Իմ ցածրութիւնից էլ չէի տեսնում նրան:

Այդպէս այլանդակօրէն կորսուաւ խենթը: Էլ չը վերադարձաւ նա: Իմ ծանօթներից և ընկերներից ո՛չ մէկն չէ տեսել նրան:

Հաւատի եմ որ քաղցած՝ պիտի մեռած լինի նա իւր ձգտած փայլուն բարձրութիւնների վրայ....

Խե՛նթը:

—

Երբ այս պատմութիւնը ստողինները կարդացին, գտան որ «խելօքը» իրաւունք ունէր, որ բարձրանալու փափագը կատարելապէս խենթութիւն է, քանի որ գետնի երեսին և ցած տեղերում ապրելը աւելի հեշտ է...

2. „ՄԷԿԸ ՄԻ ՓՈՂ“...

(ՏՈՒՐԻՍՏԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ)

Թէհրանումն էր այդ: Իրիկնադէմին շուկայից տուն էի վերադառնում: Երբ հասայ մեծ հրապարակին, մի վայրկեան կանգ առի՝ ձիաքարշից իջնող պարոնուհիների դիտելու, ապա պարտիզի կողով սկսեցի տուն գնալ:

Հեշտ չէր գնալը: Մի առուակի բաց թողած ջուրը այնպիսի լայն ու զզուելի ճահիճ էր գոյացրել ճանապարհի վրայ, որ ստիպուեցի առուի երկարութեամբ վեր բարձրանալ, նեղ անցք գտնելու համար:

Այդտեղ էր, որ յանկարծ ետևիցս լըսուեց մի մեղմ, դողդողջիւն, գըէթէ երեխայական ձայն:

—Մէկը մի փող, աղա ջան, մէկը մի փող...

Դարձայ և կանգ առի:

Կարճահասակ ծերուկ էր, քիչ կորաքամակ, բայց ծե՛ր, աշխժեր: Հազիւ կարողանում էր ոտքի վրայ կանգնել, փոքրիկ, կաքաւային քայլեր էր անում և ծնկներն անդադար դողացնում: Այնքան յուզիչ, այնքան ողբալի չէշտերով լի ձայն ունէր, որ ակամայ յուզում էր մարդու: Ձեռքին բռնել էր երկու կապոց լուցկի, որոնցից մէկի ծայրը պատռած, պարզում էր ինձ.

—Մէկը մի փող, աղա ջան, մէկը մի փող . . .

Այդպիսի ցուրտ ու խոնաւ ժամանակ թշուառ ծերունին այնպիսի ցնցոտիներով էր պատած, որ միմեանց կցելու համար հարկաւոր էր եղել բաւական կարկատել: Անգուլպայ էր. խոնաւութիւնն էլ ազատութեամբ ներս էր մտնում նրա բաց կրծքից:

—Գնեցէք, մէկը մի փող է...

—Չեմ ծխում, ասացի:

Ետ քաշուեց, չէր ծխում, ուրեմն և ի զուր էր լուցկի առաջարկում: Պղտոր աչքերով նայում էր ինձ ու դողո՛ւմ, դողո՛ւմ...

—Բայց տուր երկու հատ, աւելացրի իսկոյն—մի կապոցն ամբողջ տուր:

Զարմացաւ, երկրորդ փակ կապոցը պարզեց:

—Քանի՞ է:

Թէհրանի հանգուցեալ լուցկիի գործարանի արտադրութիւններից էր. լուցկի, որի վեց տուփը հարկաւոր էր գործածել, գոնէ մէկի վառուիլը տեսնելու համար: Տանը մի բեռ ունէինք, որն իբրև ցախ էին գործածում:

—Երեք շահի, ասաց ծերուկը:

Տուի փողը: Նայեց ինձ իւր պղտոր հայեացքով և առանց մի խօսք աւելացնելու՝ հեռացաւ:

Քիչ հեռու, չնայելով որ ոչ ոքի չէր հանդիպել, նորից ձայնեց դողդոջուն, երեխայական ձայնով:

—Մէկը մի փող, բաբա՛, մէկը մի փող...

Ու գնաց ցեխերի միջով: Թշուա՛ռ ծերուկ. երևի վատ էլ էր տեսնում. գայթում էր: Մի սև մառախուղ արդէն իջել էր հրապարակի վրայ. իսկ գազի ընկերութեան լապտերները, իրանց հազիւ նշմարելի կայծերով կարծես ցցուել էին փողոցներում՝ միմիայն այն ապացուցանելու, որ Թէհրանում գազ կայ և մի գազային ընկերութիւն...

Ճնշուած, անցայ ճահիճից: Ծերունին ծածկուեց աչքերիցս, ձիաքարշի զանգակի ձայնը և շների հաչոցները միայն լսվում էին մառախուղի միջից, յետոյ մէկ-մէկ էլ կծկուած, ցեխաթաթախ մուրացիկի ստուեր:

Որքա՛ն են, ամեն փողոցի անկիւն կան նստոտած, թափուած: Ծեր, մանուկ, կիսամերկ կանայք, որոնք պատերի և ծառերի տակից, մեծան միջով մօտենում են ու իրանց պատիւն առաջարկում, ապա կծկվում են մի անկիւն կամ կըկզում դռների մօտ՝ իրանց ծուէնների մէջ պարուրուած...

Առաւօտեան էր, որ տեսել էի յիսունից աւել այդ թշուառներից, երկու շարք կազմած սադրազամի պանից մինչև Թօքօյի մաղաղենը. վիրաւոր, հաշմանդամ, ծեկեր մանուկը չոր ու սև կրծքին կպցրած կանայք, դողդոջիւն բարեկ ծնկներով, ճաթռտած դէմքեր, շրթունքներ... կոյր ծերունիներ՝ նստած ցեխի մէջ, կանչող հայեացքով անցորդներին դիտող ստարբրիկ երիտասարդ աղջիկներ՝ ցեխաթաթախ, կեղտոտ...

—

... Երբ տուն հասայ, ասացին որ իմ ծանօթ պարսիկ իշխանազնը սպասում էր սենեակումս: Մի աղքատ արքայազն, որ պարսկական բարձրագոյն դպրոցն էր աւարտել ու չնայելով սահպեալ ծածկամտութեան, զգացմունքով տղայ էր:

Սենեակ մտայ և հազիւ նստել էի, որ ականջիս հնչեց նորից

—Մէկը մի փող...

Ծերուկն էր, անցնում էր փողոցից:

—Լուցկի ծախող ծերուկն է, ասաց իշխանազնը և տխրութեամբ ժպտեց:

—Վաղո՞ւց է, շահզադա, որ երևան է եկել այդ ծերունին. յիշում եմ, անցեալ տարի չկար:

—Նոր է, հինգ վեց ամիս միայն: Ձիրազցի է, նոր կորցրեց ինչ որ ունէր. Նախ աղջիկը, փեսան, յետոյ տղան, կայքը...

—Դիտէք պատմութիւնը.

—Երկար չէ և շատ էլ սովորական... Պարսկաստանի համար:

—Պատմեցէք խնդրեմ:

Եւ շահզադան պատմեց:

—Աղջիկը, ասաց նա, նշանած էր մի պատուական երիտասարդի վրայ—իւր մի ազգականի, որին ծերունին շատ էր սիրում: Բայց երկրի մի մեծ իշխանի յայտնել էին, որ այդ աղջիկը հրաշալի գեղեցկութիւն ունի: Եւ աղջկան տարան ի հարկէ ուժով: Տանելուց առաջ փեսային բանեցին ու բանտ դրին:

—Առանց պատճառի՞:

—Մի՞թէ իշխանի հրամանը և ցանկութիւնը պատճառ չէին: Բանտի մէջ տանջեցին նրան, իսկ ծերունուն բանտապահ փարրաշները կողոպտում էին՝ փեսային չտանջելու համար: Երբ ծերունին այլ ես տալու բան չունեցաւ, փեսան էլ բանտի մէջ մեռաւ զրկանքից, տանջանքից ու կեղտից...

Եւ ո՞րպիսի յուսահատ սառնութեամբ էր պատմում այդ սոսկումները:

—Ծերունին մտածեց գանգատել նահանգապետին, որ իշխանի ստերիմ ընկերն էր—շարունակեց պարսիկը դառնութեամբ,—նրան ո՛չ միայն վռնդեցին, այլ մի լաւ էլ ծեծեցին: Դիմեց Թէհրան: Իշխանն ու նահանգապետը մեծ կապեր ունէին մայրաքաղաքում. ծերունին այսքան ժամանակ է, որտեղ գնում է—վռնդվում է, մերժվում...

—Իսկ որդի՞ն:

—Բարի է... և կորսուած.

—Ի՞նչպէս:

—Ուզեց իշխանին սպանել... հազիւ պատմուեց; ճանաչում եմ նրան, մի սոսկալի բան կանի անշուշտ, գիտէ որ ցաւը արմատից է, ձուկը գլխից է հոտած...

Ու չորս կողմը նայեց վախեցած:

—Ապահով եղէք, ասացի...

—Այո, շարունակեց պարսիկը—ես նրան ճանաչում եմ և վախենում եմ... երդուել է մի սոսկալի բան անել. փնտռում են, խիստ փնտռում...

—Թշուա՛ռ ծերուկ, ասացի ես:

—Ա՛հ. ծերո՛ւկը... նրան այլ ես ոչ որ չէ խղճում. նոյն իսկ վռնդում են. բողոքողի հօրիցն անգամ զգուշանում են: Չգիտեմ ո՛ր եւրոպացին խղճալով՝ տուել է նրան այդ լուցկիները և եթէ օրական 5—6 հատ ծախի, անշուշտ մի հաց, մի կտոր պանիր կ'ունենայ կծելու, իսկ երբ օրը հասնի—կըգնայ մեռնելու փողոցի անկիւնում դիզուած աղբակոյտի վրայ...

Երիտասարդ պարսիկը յուզվում էր:

—Բայց ո՞րտեղ է ապրում:

—Մի՞թէ կարելի է հարցնել, թէ ո՞րտեղ են ապրում թշուառները: Ամեն տեղ, ուր մի ծածկոց կայ, աւերակների մէջ, բաղնիքների հնոցի տաք մոխրի վրայ, պատերի տակ, ախոռներում... և տեսե՛լ էք թէ ո՞րքան կան: Կին, մանուկ, ծեկեր, ծեր... բոլորն էլ ընդունակ գործելու, բայց մուրացիկ ու թշուառ դարձած, հարստահարած ու տեղահան արած...

Պարսիկը զայրացել էր յուզմունքից: Իւր հայրենիքի մեծ թշուառութիւնը պատկերացնելով, նա դողում էր նրա անհաւասարութեան առաջ:

—Օ՛հ, շարունակեց նա խղդուկ ձայնով—չգիտէք, մօսիօ, չգիտէք թէ որքա՛ն թշուառ, որքա՛ն զրկուած ենք մենք մեր իսկ հողի վրայ... Ժողովրդի մէկ տասներորդ մասը բառի բուն նշանակութեամբ մուրում է, ձեռք է պարզում, 9 մասից միւս 5-ը չեն կարող ապրել, որովհետև իրանք էլ հասել են գրեթէ այդ աստիճանին, իսկ միւս չորս մասից էլ 3-ը չմա նեղ դրութեան մէջ, անփող, պարտքերով նեղուած...

—Իսկ մի մասը:

—Ա՛հ, այդ մի մասը: Այդ մի մասն է, որ գոյացնում է միւս իննի թշուառութիւնը, մօսիօ, այդ մի սոսկալի, ծծող մասը, որ վայելում է ամեն ինչ շռայլութեամբ ու զեխութեամբ... որ զրկում է, հարստահարում, որ վերցնում է ամեն բան, չորացնում է ինչ որ չէ կարող խլել, իւրացնել, որ այդպէս, մանուկների փողոցն է նետում, կանանց պոռնկացնում, երիտասարդներին ջլատում և ծերերին այս ցեխի ու մառախուղի, խոնաւութեան ու ցրտի մէջ հանում հրապարակ՝ եւրոպացիների նետած լուցկիները ձեռքին, և՝

—Մէկը մի փող... աղա ջան, մէկը մի փող. . .

Վ. Փափազեան

Ի դէպ, քանիցս պատահել է մեզ մեզադրել համաքաղաքացիներիս այդ դատապարտելի անտարբերութեան մասին և համարեա միշտ լսած ենք 'ն յն և մի պատասխանը՝ թէ Երևանը աղքատ է, փող չկայ։ Եթէ փոքր ինչ լրջութեամբ խորամուխ լինինք հայ կի մէջ, կըտեսնենք, որ ընդհակառակն Երևանը հարուստ է և փող կայ։ Երևանում կամք, սիրտ ու գիտակցութիւն չկայ միայն, որպիսի յատկութիւնները մեզ չնորհողի ձեռքերն ու ոտքը համբուրելու պատրաստ ենք միշտ։ Երկու երեք օր չկայ, որ հեռացաւ մեզանից դերասան Աբէլեանի խումբը, որ դատ մի ամիս հիւր լինելով մեզ՝ իրար ետևից կարկըտի պէս ետծն ներկայացում տըւեց և աւելի քան 1000 ռուբլի փող ստացաւ մեզանից ու գնաց, սա մի թէ փող չլինելու նշան է։ Ի հարկէ ոչ։ Եթէ այդ ոճով չարունակենք, ի հարկէ, ոչ-եր շատ կարող ենք չարել ի պատասխան «փող չը կայ» ասողների։ Մենք միայն մի բան գիտենք, որ եթէ մեզանում կամք, սիրտ ու գիտակցութիւն լինի, փողը չեղած տեղն էլ կըստեղծուի։ Բայց մենք հարցից հեռացանք։ Այս թղթակցութիւնը նուիրելու միտք ունէինք յօդուածիս սկզբում ակնարկած երկրորդ տեսակ խնդիրներից մէկին, որ, ինչպէս ասացինք, առժամանակ զբաղեցնում է մտքերը և ապա անհետ կորչում։

Այդ տեսակ թռուցիկ խնդիրներից մէկն է ներկայումս մեր թեմական դպրանոցի նոր հոգաբարձուաց ընտրութեան խնդիրը, որի համար ամսոյս 25-ին բոլոր մեր եկեղեցիներում պատգամաւորներ պիտի ընտրուէին որոշեալ չափով, որ ապա յունիսի 1-ին թուով 6 հոգաբարձուք ընտրեն նոյն դպրանոցի համար։ Պատգամաւորական ընտրութեանց համար սահմանուած օրը՝ բացառութեամբ Ս. Սարգիս եկեղեցոյ՝ միւս բոլոր եկեղեցիներում ընտրուեցան որոշ թուով պատգամաւորներ, այն է՝ Ս. Պետրոս Պօղոսում 6 (բացառութեամբ մէկի, որ սակաւ ձայն ստանալու պատճառով նորից պիտի ընտրուի), իսկ մնացեալ 4 եկեղեցիներում երերական անձինք՝ բատ հրամանի թեմակալ գեր. փոխանորդի, որի զօրութեամբ ամեն մի եկեղեցւոյ ընտրեալ պատգամաւորների թիւի վրայ աւելանալու է նաև նոյն եկեղեցու երեսփոխանը առանց ընտրութեան։ Այդ հաշուով բոլոր պատգամաւորների թիւը Ս. Սարգիս եկեղեցւոյ ընտրելիք պատգամաւորների հետ միասին *) լինելու է ընդամենը 27 հոգի։ Աւելորդ ենք համարում մի առ մի յիշատակել, թէ ով ովանք ընտրուեցին այդ պատասխանատու պաշտօնի կոչմամբ, կասենք միայն, որ այդ 27 հոգու խղճի մտոր ընտրութիւնից է կախուած մեր թեմական դպրոցի յառաջդիմութեան ցանկալի բաղդը, որ վերջին տարիներս աւելի մեծ՝ քան սակաւ մասամբ խաղալիկ դարձաւ կրքերի ժահահոտ կուսակցութեան ոլորապտոյտ ջանքերի ու ոտնձգութեանց, մի դրութիւն, որ քանի գնաց՝ այնքան աւելի ծանրացաւ մեր թեմական դպրանոցի շնքին, նրա բարոյական արժանեաց վրայ, որի դառն պտուղները մենք, ականատեսներս, շատ անգամ դառնութեամբ սրտի ճաշակեցինք։ Տեղը չէ այժմ մանրակրկիտ մանրամասնութեանց մէջ ընկնել այդ առթիւ, որին փաստաղէնն ի ձեռին կըդառնանք անշուշտ ապագային, սակայն առ այժմս մօտակայ հոգաբարձական ընտրութիւններն ի նկատի ունենալով քանի մի տարակուսանքներ կըցանկայինք յիշել և ընտրուած պատգամաւորների խորհրդակցութեան սեղանի վրայ դնելով՝ փարատուած տեսնել ի շահ մեր դպրանոցի, որի բարգաւաճմանն ու ճշմարիտ յառաջդիմութեանը, ինչպէս մենք, նոյնպէս և նրանք, սիրում ենք հաւատալ, անկեղծ նախանձախնդիր պիտի լինին։

Նախ՝ կա՞յ իրաւունք և՝ եթէ կայ՝ ո՞րտեղ է գրուած կամ ումից տրուած, որ պատգամաւոր կարող է ընտրուել այն հաստատութեան ուսուցիչ—տեսուչը, կարո՞ղ է և իրաւունք ունի՞ պատգամաւոր ընտրուել՝ իրան իշխանաւորներ ընտրելու ձայնի իրաւունքով։ Կարծեմ չկայ այդպիսի իրաւունք, այդ մեր տարակուսութիւններից մէկն է, իսկ երևոյթը կատարուած։ Ս. Կաթուղիկէ եկեղեցում պատգամաւոր է ընտրուել թեմ. դպրանոցի այժմեան տեսուչ և ուսուցիչ պ. Տ. Յովհաննիսեանը։ Մեր եկեղեցական ծխական ուսումնարանների «կանոնք»ի 30-րդ յօդուածի բովանդակութիւնը բառ առ բառ այս է.—«Ուսուցիչք այնոցիկ ուսումնարանաց, որոց վասն ընտրին հոգաբարձուք, չունին իրաւունս ընտրող և ընտրելի հանդիսանալոյ ի ժողովսն» *)։

Երկրորդ՝ որքան արդեօք նպատակայարմար է կամ արդար պատգամաւոր ընտրել այն հին հոգաբարձուներից մէկն ու մէկին կամ մի քանիսին, որոնք իրանց պաշտօնավարութեան ընթացքում ոչ մի հաշիւ չեն տուել և որոնց գործունէութեան հետ տակաւին ոչ ժողովուրդն է ծանօթ և ոչ մնացեալ պատգամաւորները։ Նրանց հանելուկային գործունէութիւնը արդեօք դժուար կացութեան մէջ չի դնելու պատգամաւորներին հոգաբարձուներ ընտրելիս՝ եթէ նա վերընտրել է ցանկանում նրանցից մէկն ու մէկին կամ մի քանիսին։ Գուցէնք ասել, ինչ դրական կամ բացասական փաստերի յենուելով՝ անծանօթ պատգամաւորը պէտք է նրանց իր սպիտակ կամ սև քուէն տայ։ Եթէ վերընտրի՝ և յետոյ ի նորոյ ծանօթանայ նրա նախկին վնասակար գործունէութեանը՝ ակամայ մի քանի տարի ևս պէտք է դպրանոցը նրա ձեռքին խաղալիկ դարձնել, իսկ եթէ չվերընտրէ՝ և յետոյ ի նորոյ ծանօթանայ նրա նախկին օգտակար գործունէութեանը՝ դարձեալ ակամայ մի քանի տարի չարունակ պէտք է դպրանոցը զրկէ նրա բեղմնաւոր գործունէութիւնը վայելելու բաղդից։ Մեր կարծիքով ամենից նպատակայարմար էր նախքան պատգամաւորների ընտրութիւնը հին հոգաբարձուների ամենատեսակ հաշիւների հետ ծանօթանար ժողովուրդը, կամ աւելի ճիշտ՝ հին հոգաբարձուները ցանկանային կանխել իրանց հասարակական հաշուետուութեամբ, իսկ եթէ այդ չարին՝ հրաժարուէին պատգամաւոր ընտրուելու պատուից, որ իրանց, ինչպէս ասացինք, հանելուկային գործունէութեամբ, իրաւունք չունենային զուցէ մէկզմէկու դարձեալ հոգաբարձու ընտրուելու ձայն տալ ի վնաս դպրանոցի։ Այս երևոյթն էլ մեր տարակուսանքներից մէկն է, որ ցանկալի էր օր առաջ պարզուէր։ Բայց քանի որ՝ իրողութիւնը կատարուած է, այսինքն հները իրանց գործերի հետ չեն ծանօթացրել հասարակութեանը, քանի որ նրանցից ոչ թէ մէկը, այլ չորսն են ընտրուել հոգաբարձու ընտրող պատգամաւորներ՝ մի ելք է մնում մեր կարծիքով։ Նախքան հոգաբարձական ընտրութիւնը մնացեալ պատգամաւորներից պէտք է մի մասնաժողով ընտրել և նրանց յանձնել հին հոգաբարձուների բոլոր դրամական և ուսումնական հաշիւներն ի քննութիւն և բննութիւն, որ յետոյ արդիւնքը դրուի ի տես բոլոր պատգամաւորների և յետոյ ձեռնարկուի հոգաբարձական ընտրութեան։ Իսկ եթէ այդ անհնար է անել՝ մնում է կամ հին հոգաբարձուներից ընտրուած պատգամաւորներին հոգաբարձական ընտրութեանց ժամանակ զրկել ձայնի իրաւունքից յօգուտ իրանց պաշտօնակից այս կամ այն անդամի, և կամ նրանց փոխարէն ուրիշ չորս ոչ-հոգաբարձու նոր պատգամաւորներ ընտրել։ Թէ ինչպէս կըլուծէ պատգամաւորական ժողովը այս տարակուսելի խնդիրը՝ ցոյց կը տայ մօտիկ ապագան, որի բարեյաջող լուծման ակնկառոյց սպասելու իրաւունք ունի մեզ պէս ամեն հետաքրքիր ոք։

Հետաքրքիր։

*) Ս. Սարգսում ընտրութիւնը չէր կայացել բոլոր ծխականաց նախապէս հրաւիրաթերթ ուղարկուած չլինելու պատճառով։

*) Լսվում է, որ պ. Տ. Յովհաննիսեանը նախքան ընտրութիւնը հրաժարական է տուել տեսչական պաշտօնից, որով զուցէ թէ ինքը և թէ իրան ընտրողները հաւատում են թէ կարգադրանն։ Առաջինը ձևացնում է ·թէ մոռացել է, իսկ երկրորդ կողմը յիշում չգիտէ, որ տեսուչը որքան էլ որ կանխաւ հրաժարի՝ այնուամենայնիւ նա de facto մնում է և ընտրուած է տեսուչ մինչև գալոց սեպտեմբեր ամիսը, որի համար էլ ռոճիկ է ստանալու։ Մէթէ պ. Յովհաննիսեանը մայիսի վերջին հրաժարուելով՝ մնացեալ երեք ամսական ռոճկից կամովին ձեռք է վերցնում. չենք կարծում. իսկ եթէ այո՝ լիովին իրաւունք ունի պատգամաւոր ընտրուել և հոգաբարձու ընտրել։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

XII ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ

Ներկայ ամառը, յուլիս ամսին Մոսկուայում տեղի կունենայ բժշկական միջազգային XII-րդ ժողովը։ Ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի թերթերը ժողովը պէտք է լինի շատ հետաքրքրական. որովհետև ներկայ պիտի լինին այնպիսի նշանաւոր գիտնականներ, ինչպէս Վիրխով, դոքտոր Ռու և ուրիշները։ Պ. Վիրխովից արդէն համաձայնութիւն է ստացուած, որ նա ընդհանուր ժողովներից մէկում մի ճառ կըխօսի, որի նիւթն—ինչպէս ինքն է հաղորդել, կըլինի „Le rôle des vaisseaux dans l'imflamation“ (անօթների դերը բորբոքման ժամանակ)։ Ինչպէս երևում է ճառի Վիրխովի վերնագրի բնագրից, նա այդ ճառը պիտի խօսէ ֆրանսերէն։ Համաձայնութիւն է յայտնել ճառ խօսելու նաև յայտնի ռուս պրոֆեսոր Լուկիանովը, իսկ ֆրանսիական յայտնի գիտնական Ռուն ընդհանուր ժողովում յատուկ ճառախօսութիւնից հրաժարուել է։ Առաջուց վճռուած էր որ ժողովի նիստերը կայանան Մոսկուայի համալսարանում բայց որովհետև նրա աուդիտօրիաները կարող են փոքր գալ ժողովուած բազմութեան համար ուստի փնտռում են ուրիշ հասարակական դահլիճներ ևս։ Կլինիքական ցոյցերը մտադիր են անել «Դեվիչյի պօլէ»-ում եղած համալսարանական կլինիկաներում։

Ի նկատի ունենալով բժշկական գիտութեան վերջին տարիներս առած յառաջադիմութիւն՝ առաջիկայ ժողովը մեծ նշանակութիւն պիտի ունենայ գիտնական և գործնական բժշկականութեան տեսակէտից։

ՋԱՆԱՁԱՆ

Դեռ խակ է.—Մի տարօրինակ հոգուսգիտ դէպք տեղի ունեցաւ նորերս—ինչպէս հաղորդում են Լօնդօնից «Hannoverscher Courier» լրագրին—եկեղեցական պսակադրութեան ժամանակ՝ Blackburn'-ում։ Երբ մատանիների փոխանակութեան բոլէն հասաւ, Նորափեսան ուրախութիւնից փայլող դէմքով բացականչեց.

—Ահա՛ շուտով մենք միացած կըլինինք։

—Դուք շատ սխալվում էք, պարոն, պատասխանեց քահանան, ընդհատելով պսակի ծէսը. և առաջարկելով փեսային և հարսին մի շաբթից յետոյ գալ միայն, նա յարեց. ես յոյս ունիմ որ այդ ժամանակամիջոցում դուք արդէն սովորած կըլինէք աւելի քաղաքավարի պահել ձեզ եկեղեցում»։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՓՈՍՏԱՅԻՆ ՆՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ

Վրաց պատերազմական ճանապարհով.

Մայիսի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը

Թիֆլիզից — հինգ տեղ ունեցող կառքերը դուրս են գնում առաւօտեան 8 ժամին (գիշերելով Մլէթ կայարանում) և 10 ժամին (գիշերելով Պասանաուր կայարանում) և հասնում են Վլադիկավկազ միւս օրը, երեկոյեան 7 ժամին և 9 ժամին 10 ռոպէին։ Վեց տեղ ունեցող օմնիբիւսները Թիֆլիզից դուրս են գընում առաւօտեան 7 ժամին և 3 ժամին կէսօրից յետոյ և առանց գիշերելու ճանապարհին հասնում են Վլադիկավկազ միւս օրը առաւօտեան 9 ժամին և երեկոյեան 5 ժամին 20 ռոպէին։

Վլադիկավկազից հինգ տեղ ունեցող կառքերը դուրս են գնում առաւօտեան 7 ժամին (գիշերելով Մլէթ կայարանում) և 9 ժամին Գուդաուրում) հասնում են Թիֆլիզ միւս օրը երեկոյեան 7 ժամ 25 ռոպ. և 8 ժամ 15 ռոպէին։ Վեց տեղ ունեցող օմնիբիւսները Վլադիկավկազից դուրս են գնում առաւօտեան 8 ժամին և երեկոյեան 7 ժամին և հասնում են Թիֆլիզ միւս օրը առաւօտեան 8 ժամին 15 ռոպէին և երեկոյեան 8 ժամին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիսի) և ներքին հիւանդութիւնների։

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9-10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՕ—11—12 ժ. կանանց և երեխայից հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ.—10—11 ժ. կանանց հ. չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ, իսկ 1½—2 ժ. երկուշաբթի, երեքշաբթի և հինգշաբթի.

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ.—6½—7½ ժ.

Հիւանդանոցումը քիմիական և խորհրդացական հետազօտութիւն են անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. Հքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ։

ՎԻՐԱԲՈՒԺԱԿ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Մշտական մահճակալների բաժնով

ԴՕՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՈՋՈՎԻ

(ՆԱԽԿԻՆ ԴՕՔՏՕՐ ԿԱՐԳԵՉԵՆԿՕՅԻ)

Սօլօլակ, Գանովսկայա փողոց № 3,

Հիւանդների ընդունելութիւնն ամեն օր։

Ի. Մ. ՄԱՐԿՈՋՈՎ, ժամը 10—12 վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների։

Փ. Վ. ՉՈՒԴՆՈՎՍԿԻ, ժամը 12½—2, վերաբուժական և մէզի հիւանդութիւնների, (երկուշաբ., չորեքշ., ուրբաթ և կիւրակէ օրերը)։

Ե. Գ. ԴԵԼՈՎ. ժամը 12½—1½. ջղային հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշաբ. և ուրբաթ օրերը)։

Կին բժիշկ ԵԱ. Կ. ԿԱՐՊՈՎԻՉ, ժամը 10—11, մանկաբարձական և կանացի հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Դ. Ի. ՕՍՏՐՈՎՍԿԻ ժամը 12—1, ներքին հիւանդութիւնների և ծաղկի պատուաստումն (երեքշաբ., հինգշաբ. և շաբաթ օրերը)։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ, ժամը 12½—2, ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների (չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆ, ժամը 12—1, մանկաբարձական և կանանց հիւանդութեանց (երեքշ., հինգշ. և շաբաթ օրերը)։

Ա. Ե. ՖՕՆ-ԲՐԵՆՆԷՐ, ժամը 12—1, ատամնաբուժութեան, նաև ատամ մաքրելու, լցնելու և արհեստական ատամներ դնելու։

Ա. Ն. ԳԷՆՑ, դեղագործութեան մագիստրոս, մանրադիտակով քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ է կատարում — հետազօտութիւն մէզի, խորխի, արեան, կաթի և այլն։

Հիւանդների ցանկութեամբ համախորհուրդ է լինում։ Բուժարանում կան բաժանմունքներ՝ մարմնամարզական — մասսաժի և ոսկրաբուժական։

Խորհրդի համար վճարը, ինչպէս նաև ծաղկի պատուաստման համար, 1 ռուբլի է։

Աղքատների համար ձրի է։ Համախորհուրդների, անդամահատութեան մասսաժի, մշտական մահճակալի, էլեքտրականութեան, լողարանի և ցնցուղի համար առանձին համաձայնութիւն պէտք է կայացնել։

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ Ընկերութեան Վարչութեան մէջ դրամամուտները ներկայ յունիսի 1-ից սկսած մինչև սեպտեմբերի մէկը կըսկսուեն առաւօտեան ժամը 9-ից և կըվերջանան ժամը 1-ին կէսօրից յետոյ. փոխառութեանց տրուելը կըվերջանայ ժամը 12 ին։ (4—1)

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ
ԵՐԵՒԱՆՈՒՄ

Մ. Մ. ՄԱՐԳԱՐԵԱՆՑԻ

Հիւանդների ընդունելութիւնը բացուելու է յունիսի 1-ից, հիւանդ ատամներ բժշկել ու լցնել, և նոր ատամներ շինել։ (10—4)

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս.-Ի

ՀՈՂԱԾԻՆ և ԱՆՄԵՌ ԱՇԽԱՐՔ

ԳՐՔՈՅԿԸ

ԳԻՆՆ է 8 ԿՈՊ.։

Հարցնել Թիֆլիզի գրախանութներում։ (5—2)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՌՕՍՍԻԱ“

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1881 Թ.

Ս.-Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 25,500,000 ռ.

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետակ. բանկում։

Ընկերութիւնն ընդունում է՝

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

այսինքն դրամագլուխների և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեպհական ծերութիւնը, բաժինքը աղջիկների համար, թոշակները տղաների համար և այլն, առանձին շահաւէտ պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ Ընկերութեան օգուտներին։

1896 թուի յունվարի 1-ին «ՌՕՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապահովագրուած էին 35563 անձինք՝ 91,406,948 ռուբլի դրամագլխով։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱԽՏ ԴԷՊՔԵՐԻՑ

առանձին անձինքների, նոյնպէս և համագումար ապահովագրութիւններ գործարաններում ծառայողների եւ բանուորների,—պակասցնելով ապահովագրական վճարները, գիվիդենտի փոխարէն։

ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալուածքների (շինութիւնների, մեքենաների, ապրանքների, կահ-կարասիքների, այլն։

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետային, ցամաքային եւ ծովային. ապահովագրութիւն նաւերի։

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեպհական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան Վարչութեան մէջ, որ գտնվում է՝

ԹԻՖԼԻԶՈՒՄ, Սերգիեւսկայա փ. տ. № 6. և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։

Ապահովագրութեան տոմսակներ՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար դժբաղդ դէպքերից՝ երկաթուղիներով և շոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ տրվում են նոյնպէս երկաթուղիների կայարաններում և շոգենաւային նաւահանգիստներում։ (50—36)

Bateaux a vapeur Français „N. PAQUET ET Cie“

Ֆրանսիական շոգենաւային ընկերութիւն

„Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն կըլինի ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկիզբը յունվարի 29/10-ի չորեքշաբթիից, և

ԲԱԹՈՒՄԻՑ ԴԷՊԻ ՄԱՐՍԷԼ՝ ՏՐԱՊԻԶՈՆԻ, ՍԱՄՍՈՆԻ ԵՒ Կ. ՊՕԼՍԻ ՎՐԱՅՈՎ

Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 11/23 յունիսի ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետ է ԲԻԱՆԿԻ,

և այսպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, երեկ. 4 ժամին

Բաթումից—Փարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ, գինը սովորականից պակաս է լինում։

Ապրանքների և ճանապարհորդների մասին պէտք եղած տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին

Բաթումում.—Վիկտոր դ'Արնոյին, Նաբերեժնայա։
Թիֆլիզում.—Պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փողոց, նախկին Արծրունու քարվանսարա։
Բաքւում.—Պ. Ս. Դիլդարեանին, Կոլիւբեակինի հրապարակ։
Նովօրոսիյսկում.—պ. Մելխիոր Հերշինրօդերին։ (20—8)

ԽԱՐԿՈՎԻ

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲԱՑՎՈՒՄ Է ԱՅՍ ՏԱՐՈՒԱՅ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Ընդունվում են երկու սեռի անձինք առանց կրօնի խտրութեան հետևեալ երկու կատեգորիայով։

1) Գիմնազիոնների վեց դասատան վկայական ունեցողները աւարտում են համալսարանից ԱՏԱՄՆԱԲՈՅԺԻ գիպլօմ ստանալու իրաւունքով։

2) Ցիշեալ վկայական չունեցողները—ԴԱՆՏԻՍՏԻ գիպլօմով։

Երկու կատեգորիաների համար ևս դասընթացը կ'աւանդեն համալսարանի պրօֆեսօրներ։ Դպրոցին կից կըլինի ատամնաբուժական կլինիկա և գործնական պարապմունքների համար տեխնիքական կաբինետ։ Խնդիրները վաղօրօք պէտք է ուղարկել դպրոցի հիմնադիր դօքտօր Ս. Ա. Նեմիրովսկուն (С. А. Немировскому, Николаевская площадь, домъ Штейфона)։ Պատասխանի համար պէտք է փոստադրոշմ ուղարկել։ (4—2)

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ 1897-1901 քառամեակի իրաւասուների լրացուցիչ ընտրութիւնները կըկատարուեն կիւրակէ, յունիսի 1-ին ընտրական ժողովում, որ տեղի կ'ունենայ Թիֆլիզի ժողովարանի ամառային բնակարանում, Միքայէլեան փողոցի վրայ, Թայիրեանի այգում։ Կըբուէարկուեն ինչպէս նրանք, որոնք յայտնել են իրանց համաձայնութիւնը իրաւասութեան քուէարկուելու մինչև մայիսի 18 ընտրութիւնները և չեն ընտրուել, բացի քուէարկութիւնից հրաժարուողներից, նոյնպէս և նրանք, որոնք կըյայտնեն իրանց համաձայնութիւնը մինչև լրացուցիչ ընտրութեանց օրը, յունիսի 1-ը։

Ժողովի սկիզբն է առաւօտեան ժամը 8-ին։ (3—3)

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ծանուցանում է ի գիտութիւն ընդհանուր հասարակութեան, որ սոյն 1897 ամի մայիս ամսի 28-ին, ցերեկուայ 1 ժամին, քաղաքային վարչութեան բաժնում, որ գտնւում է Երևանեան հրապարակի վրայ՝ քաղաքային տան մէջ, տեղի պիտի ունենայ քաղաքի փողոցների և հրապարակների 1897 յուլիս 4 ից սկսած ֆօտօգենով լուսաւորելու երկու տարով վարձակալութեան աճուրդը։

Վարձակալութեան պայմանների մասին կարելի է տեղեկութիւն ստանալ վարչութեան գիւանատան մէջ իւրաքանչիւր օր, բացի տօն օրերից, ցերեկուայ 11-ժամից մինչև ժամի 1-ը։ (4—4)

Дозволено цензурою, Тифлисъ 31-го Май 1897 года. Տպարան Մնացական Մարտիրոսեանցի։ Типографія М. Мартиросянца. На Михайловской ул. № 18